ԴԻՎԱՆ
ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ

I

ՀՍՍՌ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

СВОД АРМЯНСКИХ НАДПИСЕЙ

ВЫПУСК

I

ГОРОДИЩЕ АНИ

СОСТАВИЛ
И. А. ОРБЕЛИ

CORPUS INSCRIPTIONUM ARMENICARUM

LIBER

I

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1966

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊՐԱԿ

I

ԱՆԻ ՔԱՂԱՔ

ԿԱԶՄԵՑ
Հ. Ա. ՕՐԲԵԼԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1966

ԱՅՍ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԱՐԴՅՈՒՆՔ Է Հ. Ա. ՕՐԲԵԼՈՒ ԱՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ
ԿԱՏԱՐԱԾ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ։
ԳԻՏՆԱԿԱՆԸ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՆ ԶՈՒԳԸՆԹԱՑ ՀԱՄԵՄԱՏԵԼ, ՍՏՈՒԳԵԼ
ԵՎ ՀԱՎԱՔԵԼ Է ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՊԱՏԵՐԻՆ ԵՎ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՎՐԱ
ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ 200-ԻՑ ԱՎԵԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ։

Խմբագրական կոլեգիա
ԱՌԱՔԵԼՅԱՆ Բ. Ն., ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ս. Գ.,
ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կ. Գ.

Պրակը խմբագրեց
Ս. Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Շիրակի վիմարձանագրությունները» դասընթացի ներածական դասախոսությունը՝ կարդացված Ս. Պետերբուրգի համալսարանում 1914 թ. սեպտեմբերի 6-ին[1]

Պարզ պատկերացնելու համար այն առանձնահատուկ կարևորությունը, որ ներկայացնում է հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը հին հայկական և վրացական պատմիչների երկերի հետ միասին, անհրաժեշտ է նկատի ունենալ մի քանի հանգամանքներ: Հայկական և վրացական հին պատմագրությունը բավականին հարուստ է, սակայն մեզ հասած հայ և վրացի բոլոր պատմիչները, բացառությամբ մեկ հայ հեղինակի, որի գործերից միայն մի քանի պատառիկներ են պահպանվել, և երկու վրացի հեղինակների՝ կրոնավորներ են: Այս հանգամանքը բավականաչափ բնորոշում է նրանց նախապատվությունների շրջանակները. շատ մեծ ուշադրություն դարձնելով եկեղեցական հարցերին, երբեմն ամբողջ գլուխներ նվիրելով դավանաբանական վեճերի շարադրմանը և եկեղեցական ժողովների որոշումներին, մեծ սիրով նշելով այն ամենը, ինչ վերաբերում է եկեղեցական շինարարությանը՝ այդ հեղինակները, չնչին բացառությամբ, խուսափում են աշխարհիկ ամեն ինչից և, հասկանալի է, չեն տալիս իրական կյանքի և կենցաղային իրադրության ոչ մի պատկերացում: Ռազմական պատմության համար նրանց ընձեռած առատ նյութն անգամ շատ կողմերով սխեմատիկ բնույթ է կրում, դարձյալ կտրված կենդանի իրադրությունից: Ճիշտ է, տեքստերի մանրակրկիտ ու բծախնդիր հետազոտությունը, այնուամենայնիվ, կարող է տալ և արդեն սկսում է տալ որոշ նյութ, սակայն այդ ճանապարհով հայտնաբերված տվյալները նույնպես կարող են հասկանալի դառնալ միայն նյութական հուշարձանների հետ առնչվելով: Որոշ իմաստով նույնը կարելի է ասել և վրացական պատմիչների մասին:

Այդ բոլորի հետևանքով Հայաստանի կյանքի առավել հետաքրքրական կողմը՝ ժողովրդի կյանքը, ոչ միայն ընտանեկան կենցաղը, կահկարասին, քաղաքային բարեկարգությունը, այլև, նույնիսկ միջնադարյան հայ քաղաքի հասարակական կառուցվածքը մնում էին միանգամայն անհայտ, քանի դեռ չէին ուսումնասիրվել վիմարձանագրությունները, հնագիտական հուշարձանների այն առաջին տեսակը, որը պատմագիտական աղբյուրների շարքը մտավ շնորհիվ Մ. Բրոսսեի և Ղ. Ալիշանի:

Բանն այն է, որ գրական հուշարձաններից բացի, Հայաստանում մեր տրամադրության տակ ունենք շատ աղքատ ձեռագրական նյութեր գրառումների ձևով և ավելի փոքրաթիվ

[1] *Հ. Օրբելին մտադիր էր սույն դասախոսությունը վերամշակել և դարձնել «Դիվանի» ընդհանուր ներածություն. հիվանդությունն ու մահը խանգարեցին: Տպագրում ենք իր նախնական վիճակում և անփոփոխ:* Խմբ.:

արխիվային փաստաթղթեր, այն էլ ուշ շրջանի՝ XVII—XVIII դարերի: Առանձնահատուկ տեղ են գրավում Կիլիկյան Հայաստանի և այսպես կոչված՝ Փոքր Հայքի մի քանի տասնյակ հրովարտակները: Մնացած ամբողջ նյութը՝ թագավորական հրովարտակները, կաթողիկոսական կոնդակները, զանազան հրամանագրերն ու որոշումները, նվիրատվական փաստագրերը, պայմանագրերը, կալվածագրերը և այլն, կամ չեն հասել մեզ, կամ հասել են ոչ թե ձեռագրերի ձևով, այլ իբրև քարերի վրա փորագրված արձանագրություններ:

Այդ արձանագրությունները փորագրվում էին ժայռաբեկորների վրա, տաճարների և այլ հասարակական ու անհատական կառույցների պատերին, սահմանաբաժան կոթողների վրա և այլն:

Առավել հարուստ ու բազմազան արձանագրություններ են պահպանվել տաճարների պատերին. այստեղ կարելի է գտնել և՛ ընդարձակ վավերագրեր, և՛ մի տասնյակ բառերից կազմված, կարճառոտ հիշատակագրություններ:

Եկեղեցական շենքերի պատերին փորագրված արձանագրությունները մեծ մասամբ պաշտոնական վավերագրեր են հուշարձանի կառուցման, հավատացյալների նվիրատվությունների, վանքին շնորհված արտոնությունների, զանազան տեսակի օրինականացումների, պայմանագրերի մասին և այլն: Համարյա միշտ նրանք կազմված են՝ պահպանելով հայտնի բանաձևը և համեմատաբար հազվադեպ են շաբլոնից շեղվում: Հենց այդ իմաստով մեծ հետաքրքրություն են ներկայացնում միանգամայն անձնական բնույթի այն փոքրաթիվ արձանագրությունները, որոնք կազմվել են յուր և յուրայինների համար ու այդ պատճառով ազատ են շաբլոնից. այդպիսին է իշխան Սահմադինի արժեքավոր արձանագրությունը Մրենում.

1. *Թվ: ՋԺ ի տիեզերակալութի Հուլաւու ղանին ես Սահմադին որդի (Աւետեաց գ) նեցի զԹագաւորանիստ (տ)եղի(ս) զՄրէն ի յԱրտաշրէ որդո Շահնշահի հալալ ընչ(ից իմ)ոց ի վայելումն ինձ և որդ*
2. *ոց իմոց, ած շնահաւոր ար(ա)ացէ յաւիտեանս ժամանակաց: (ի Թվ) ՋԻԵ յաշխարհակալութի Ապաղա ղանին ես Սամտին, որ պարոնի նստոց ու դարապաս չկայր զաս այգիս և զդրա*
3. *խաս, որ կոչի արքայութի, գնեցի զամէն մեկ յիւր տիրոչէն, և յիմ մտաց դուս՝ առանց վարդպետի ձևեցի ու հիմն ձգեցի դարապասիս ու դրախ(տ)իս ի (Ժ) տարին կատարեցի. ած շնահավոր արասցէ պարոն Սահմադինին որդից ի յորդիք. ու խարճ, որ եղաւ դարտպասիս: Խ: Ռ: Դուկատ դահեկան*[1]

Հայաստանի և Վրաստանի արտաքին պատմության, մասնավորապես ռազմական պատմության համար վիմագրական տվյալները այնքան էլ հարուստ չեն: Ես դժվարությամբ կարող եմ վերհիշել որևէ արձանագրություն, որը հատկապես մեկնաբաներ այս կամ այն ռազմական իրադարձությունը, սակայն շատ արձանագրություններում կարելի է գտնել չափազանց կարևոր տեղեկություններ, ակնարկված կամ կողմնակի ասված, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել նաև ռազմական պատմաբանի համար: Չխոսելով արդեն այն տեղեկությունների մասին, որոնք հայտնում են Հին Հայաստանի զանազան գործիչների այսինչ թվականին, այսինչ պատերազմում զոհվելու մասին, այլև այն տեղեկությունների, որոնցով նրանց հարազատները պարզաբանում են տվյալ տաճարի կառուցման հանգամանքները, մենք հանդիպում ենք նաև ընդհանուր կարգի տեղեկությունների: Օրինակ, Էրմիտաժում պահպանվող XIII դարի Կիլիկյան տապանակի վրայի արձանագրության մեջ համառոտ հիշատակվում է մամլյուկների՝ Կիլիկիա կատարած արշավի մասին, նշելով այդ արշավանքի տարեթիվը: XII դարի նշանավոր զորավար Ամիրսպասալար Զաքարիայի՝ Բագարանի (Բայազետի մոտ) արձանագրության մեջ հայտնվում է, որ Զաքարիան Բագավան

---

[1] *Н. Я. Марр,* Зап. вост. отд. Росс. Арх. Общества, том VIII, вып. I, стр. 82—83. *Նույնի* „Ани", *էջ* 42.

է եկել Խլաթից, և քանի որ այդ արձանագրությունը վերաբերվում է վրացիների հայտնի արշավանքին դեպի Խլաթ, ուստի հիմք ենք ունենում պարզելու, եթե ոչ բացարձակ, գոնե մասամբ ինչ ուղիներով է ընթացել զորքերի վերադարձը արշավանքից:

Հետաքրքիր է և այն, թե վիմական արձանագրությունների, նրանց թվի ու կազմության վրա ինչպես ուժգին են անդրադարձել Հայաստան կատարված բազմաթիվ արշավանքները, մանավորապես դեպի Անիի երկրամասը XI—XII դարերում, ինչպես նաև տիրակալների բազմիցս փոփոխությունները. բավական է ասել, որ XI դարի կեսերից մինչև 1151 թվականը մենք Անիում ոչ մի վիմական արձանագրություն չունենք ո՛չ կառուցման և ո՛չ էլ վերանորոգման մասին, բացի մեկից, որը պատմում է բերդի աշտարակի կառուցման մասին: Ռազմական պատմաբանի համար բացառիկ նշանակություն են ներկայացնում այնպիսի վիմարձանագրությունները, ինչպիսիք են Հաղարծնի վանքի և Այրիվանքի երկու արձանագրությունները, որոնք լրացնելով միմյանց, թվարկում են այն ամրոցները, որոնք գրավվել են Իվանե և Զաքարե Երկայնաբազուկ եղբայր զորավարների կողմից՝ XIII դարի սկզբին:

Սակայն, իհարկե, այդ բոլոր նյութերն ու տեղեկությունները մեզ համար չեն ներկայացնում մի աննշան մասն անգամ այն հետաքրքրության, որոնք վերաբերում են երկրի ներքին կյանքին, հասարակական կառուցվածքին, վարչությանը և, վերջապես մասնավոր կյանքին: Նույնիսկ մի այնպիսի նշանավոր կենտրոնի, ինչպիսին Անին է, քաղաքային վարչության ներքին կառուցվածքի մասին մենք պատկերացում չէինք ունենա, եթե նկատի ունենայինք լոկ այդ հարցի նկատմամբ անտարբեր պատմիչների տեղեկությունները, և եթե չլինեին վիմական արձանագրություններն իրենց տվյալներով՝ քաղաքային խորհուրդների, ավագների խորհրդի, աչքի ընկնող ավագների և այլնի մասին:

Առանց վիմարձանագրությունների, առանց բազմաթիվ հարկային ու պարհակային տերմինների, ճանապարհային, մաքսային և այլ տուրքերի անվանումների վերլուծության, անհնար կլիներ գաղափար կազմել քաղաքի ֆինանսական կարգի մասին. պատմիչների երկերում հանդիպող հատուկենտ տերմինները իրական նշանակություն կարող են ստանալ՝ հիմնված վիմագրական նյութերի վրա, որոնք երբեմն հնարավորություն են տալիս որոշելու նույնիսկ հարկային ու մաքսային վճարումների չափը և այլն: Բացառիկ հարուստ նյութ են պարունակում վիմարձանագրությունները նաև մասնավոր-իրավական հարաբերությունների բնութագրման համար. դրանք պայմանագրեր են հողատարածությունների համատեղ օգտագործման, ունեցվածքի բաժանման, կալվածագրերի մասին՝ բոլորը փորագրված վանքերի պատերին, որով և սրբագործվում ու հաստատվում են այդ վավերագրերը:

Եթե անդրադառնանք Հայաստանի կյանքի նույնիսկ այն կողմին, որն ամենից ավելի է գրավել պատմիչներին՝ եկեղեցական կյանքին, ապա այստեղ էլ վիմական արձանագրությունների մեջ հետաքրքրական շատ բան կգտնենք. ինչպիսի բնորոշ պատկեր է ներկայացնում, օրինակ, Անիի արձանագրություններից մեկը, որը կրկնվում է նաև Մրենում, ուր սահմանվում է հոգևորականի օծման նվազագույն տարիքը (թէ ով յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց կաշառաւք կամ անմիրու երեց առնէ), արգելում օծման համար անընտրելի, անարժան ու մարմնական պակասություն ունեցող, կամ անհամապատասխան տարիքի մարդկանց կաշառքի ու ճնշման միջոցով ձեռնադրելը: Նույնքան բնորոշ է Անիի մի այլ արձանագրություն, որով սահմանվում է, որ պսակի թույլտվություն ստանալու պարտականությունը դրվում է փեսայի, և ոչ թե հարսի հարազատների վրա, բռնի ամուսնության դեպքերից, կամ որ ավելի հավանական է, հարսի առևանգումից խուսափելու համար: Վերջապես հոգևորականության և հոտի փոխադարձ հարաբերությունների ինչպիսի վառ պատկեր է տալիս նույնպես Անիի, բայց այս անգամ Վրաստանի կաթողիկոս Եպիփանի (1216) վրացերեն արձանագրությունը, որը հրահանգում է քահանաներին չվաճառել եկեղեցու շնորհները, իսկ ծխականներին՝ միջոցներ չխնայել եկեղեցու սպասավորների ապրուստի համար[1]:

---

[1] „Известия" Академии наук, 1910.

Եթե նույնիսկ մի կողմ թողնենք արձանագրությունների բովանդակությունը և զբաղվենք նրանց միայն ձևի ուսումնասիրությամբ կամ նրանց մեջ հիշատակվող անուններով, ապա այստեղ էլ աղքատիկ թվացող նյութը պայծառ լույս կսփռի հին հայերի տարբեր դասակարգերի տրամադրությունների, նրանց փոխադարձ հարաբերությունների վրա: Չէ՞ որ միայն վիմագրական տվյալների շնորհիվ հաջողվեց պարզել այն հետաքրքրական փաստը, որ XI դարում հայ ազնվականության ներկայացուցիչները, ունենալով սեփական մկրտության տոմարական անունները, սիրում էին կենցաղում կրել մուսուլմանական, մեծ մասամբ արաբական անուններ: Մինչդեռ ցածր խավերի ներկայացուցիչներին վերաբերող արձանագրությունների մեջ երևան են գալիս, սովորաբար, միայն տոմարական քրիստոնեական անուններ, իսկ վերջին շրջանում՝ միայն սիրված ժողովրդական անուններ: Անունների համակարգի այս ցայտուն տարբերությունը հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք ազնվականության ձգտումը դեպի ամեն ինչի օտարը, իսկ ստորին խավերինը՝ դեպի հայրենին (լինի դա լեզուն, տների արտաքին հարդարանքը կամ կահկարասին): Այդ մասին են պատմում Անիի հնագիտական հուշարձանները: Այժմ արդեն պարզ է, որ Մխիթար Գոշի, Սմբատի և ուրիշների դատաստանագրքերի և այլ իրավաբանական ժողովածուների ու տրակտատների վրա կառուցված հայ իրավունքի պատմությունը, առանց հայկական վիմագրական նյութերի սպառիչ օգտագործման, պիտի տառապի նույնպիսի պակասությամբ, թերասածությամբ, անճշտությամբ և երբեմն նույնիսկ հետևությունների լիակատար սխալությամբ, ինչպես արդեն հնացած ու դեն նետված Շիրակի պատմությունը, որը կազմված էր միայն մատենագրական տվյալների հիման վրա, առանց հնագիտական ու վիմագրական հուշարձանների իրական լուսաբանության:

Եվ վերջապես հայկական վիմարձանագրությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև լեզվի պատմության համար: Գրական ստեղծագործությունների մեջ համեմատաբար դժվար է գտնել այնպիսի ձևեր, որոնք հատուկ են ոչ թե գրական, այլ կենդանի, ժողովրդական լեզվին. ժողովրդական, բարբառային կազմություններով հարուստ ստեղծագործությունները, ինչպես Մաղաքիայի երկը, հազվագյուտ են. դա բացատրվում է, իհարկե, նրանով, որ այդպիսի ստեղծագործության հեղինակները իբրև կենդանի լեզվի կրողներ, աղավաղվել են գրագիտությամբ, իսկ ժողովրդական կենդանի լեզվի այն փոքրաթիվ երևույթները, որոնք անդրադարձել են նրանց երկերում, մտցրել են ավելի պակաս գրագետ արտագրողները:

Այլ բան ենք տեսնում արձանագրություններում. եթե պաշտոնական արձանագրությունները, որոնք գրված են մեծ մասամբ ըստ բանաձևի և կենդանի խոսակցական ձևերի տեսակետից մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, ապա մեծ քանակությամբ գերեզմանային հուշագրությունները (տապանագրեր), ինչպես նաև իրերի վրայի արձանագրությունները հարուստ նյութ են տալիս բարբառագետին: Այդ նյութերը հատկապես արժեքավոր են նրանով, որ նրանց մեջ որոշ է վայրը և գրեթե միշտ՝ ժամանակը:

Հենց այդ տեսակետից էլ արձանագրությունների լեզուն հետաքրքիր է նաև պատմաբանի համար. հայերի գաղթը մի նահանգից մյուսը և բուն Հայաստանից՝ գաղթավայրերը, որը ըստ երևույթին բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում, չեն կարող անհրաժեշտ չափով ուսումնասիրվել և ճշտվել առանց բարբառագիտական հետազոտությունների:

Անիի և առհասարակ Շիրակի վիմարձանագրությունների ավելի ուշադիր և խորազնին ուսումնասիրությունը՝ կապված ժամանակակից հայկական կենդանի խոսվածքների հետ, կարող էր պարզել, թե իրականում ուր են գաղթել անեցիները և որտեղ պետք է փնտրել նրանց հետնորդներին: Հայերի գաղութային պատմության այս հիմնական հարցի կարևորությունը հատկապես հասկանալի կլինի, եթե, Եվրոպայի հայկական գաղութների շրջանակներում մնալով, հիշենք Լեհաստանի կիրառական արվեստի ստեղծագործություններում նկատվող հայկական ազդեցությունների և առայժմ ենթադրական այն տեսությունների մասին, որոնք պնդում են ռուսական արվեստի վրա որոշ արևելյան, հատկապես հայկական ազդեցությունների առկայությունը:

Եթե նույնիսկ անտեսենք այնպիսի կարևոր հարց, ինչպիսին է գաղութային հարցը, ապա արձանագրությունների լեզվում կարող ենք արժեքավոր նյութ գտնել ավելի մանր, բայց էական հարցերի լուծման համար: Այսպես, օրինակ, վերցնենք զուտ հայկական միջավայրի ծնունդ Հաղարծնի վանքը, որն հավանաբար հետևելիս է եղել քաղկեդոնական ուսմունքին. որքան բնորոշ է, որ հենց այստեղ մի քանի հայկական արձանագրությունների մեջ հանդիպում ենք այնպիսի տերմինների, ինչպիսիք են՝ քոր, դեկան, տրապեզ իսկ վրացերենում ἅπαξ λεγόμενον լիովին քաղաքացիություն ստացած տերմինների:

Այն ինքնուրույն նշանակությունից բացի, որ ունեն հայկական վիմարձանագրությունները, դրանք մեզ համար կարևոր են նաև որպես հայկական արվեստի ու արդյունագործության հուշարձանների ուսումնասիրության օժանդակ աղբյուրներ:

Չկա համարյա ոչ մի հայկական մոնումենտալ հուշարձան, տաճար, մատենադարանային շենք, գավիթ ու այլ եկեղեցական կառուցվածք, պալատ, բերդաշտարակ, վերջապես գերեզմանային կոթող, սահմանաբաժան քար, որ իր վրա չունենա արձանագրություն, որը համարյա միշտ թվագրված է և շատ հաճախ պատմում է այդ հուշարձանի կառուցման կամ կանգնեցման մասին: Ճիշտ այդպես էլ արձանագրված է կիրառական արվեստի և գեղարվեստական արդյունագործության ստեղծագործությունների մի զգալի մասը, հատկապես եկեղեցականը, ինչպես՝ մասյանների կազմերը, խաչերը, գավազանները, սկիհները, նշխարատուփերն ու տապանակները և այլն: Այսպիսով, հայկական հուշարձանների ճնշող մեծամասնությունը անվիճելիորեն թվագրվում է այդ արձանագրություններով, եթե ոչ ստույգ նշելով տարին, գոնե այն որոշելով մոտավորապես. դրա շնորհիվ վերանում է լոկ հնագիտական տվյալների հիման վրա հուշարձանի երբեմն անստույգ և կասկածելի թվագրությունը: Իսկ այն հուշարձանները, որոնք իրենց վրա թվական չունեն, թվագրվում են շրջապատում եղած այլ բազմաթիվ թվագրվածների օգնությամբ, որով և որոշվում են նրանց ժամանակագրական սահմանները: Թվագրող արձանագրությունների հանգամանքը բնորոշելիս բավական է ասել, որ բազմաթիվ հուշարձանների համար, այդ թվում նույնիսկ VII դարի, մենք ունենք ոչ միայն նրանց կառուցման սկզբի և ավարտման տարեթվերը, այլև կարող ենք հետևել տվյալ շենքի ողջ պատմությանը, ինչպես օրինակ, Փրկչի եկեղեցին Անիում, որտեղ հայտնի է նրա կառուցման, երկու վերականգնումների և գմբեթի վերականգնման ժամանակները, այսինքն՝ երեք և կես դար հարատևող չորս փուլեր, ընդ որում վերջին թվականը նշանակված է գմբեթը պսակող խաչի նշանավոր հիմքի վրա: Իբրև նույնանման երևույթի օրինակ կարելի է նշել էջմիածնի հայտնի տապանակը: Շնորհիվ այսպիսի թվագրության, այժմ արդեն հնարավոր է դառնում ուրվագծել որոշ հուշարձանների,՛ օրինակ, խաչքարերի ձևերի զարգացման ընթացքը:

Համապատասխան արձանագրությունների հետագա ուսումնասիրությունը հայկական արվեստի պատմության մի էջը չի որ բացելու է: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը. պատմաբանի ու հնագետի կողմից հայկական արձանագրությունների նշանակությունը չըմբռնելու և նույնիսկ անտեսելու հետ միաժամանակ, երբեմն նկատում ենք մի այլ ծայրահեղություն՝ նրանց գերագնահատությունը իբրև վավերագրերի, նրանցում անվիճելի, հավաստի, անխախտ տվյալների արժեքներ տեսնելը: Հասկանալի է, որ իրականում արձանագրությունները նույնպիսի ուշադիր և զգուշավոր վերաբերմունք են պահանջում, ինչպես և մյուս փաստաթղթերը: Եթե ոչ մեկի մտքով չի անցնի վիճարկել թղթերի վրա գրված հրովարտակների, վավերագրերի և նույնիսկ ձեռագիր հիշատակագրությունների պատճենահանման հնարավորությունը, արտադրության ընթացքում նրանց աղավաղման և, վերջապես, կեղծման հնարավորությունը, ապա, երբ խոսքը վերաբերում է վիմական արձանագրություններին, մեզ հասած և քարերի վրա փորագրված բոլոր ակտերը, չգիտես ինչու, բացարձակ հավաստի են համարվում և այդպիսի վավերագրերի հավաստիության նկատմամբ ամեն մի երկբայություն առաջ է բերում տարակուսանք և թերահավատություն: Մինչդեռ վիմական արձանագրությունների հետ էլ անհրաժեշտ է առանձնապես զգույշ լինել, քանի որ այդ վավերագրերը ձեռագիր արձանագրություններից տարբերվելով միայն այն նյութով, որի վրա նրանք գրվել են, ձեռագրերի նման նույնպես արտագրվել են և ընդմին երբեմն

ներարկվել զանազան փոփոխությունների: Մարմաշենի կառուցման մասին արձանագրության մեջ այդպիսի մի համոզիչ օրինակ ունենք. տաճարի վրա համաչափորեն տեղավորված են երկու երկարաշունչ արձանագրություններ, հարավային պատին՝ տաճարի կառուցման մասին XI դարի սկզբին, իսկ հյուսիսային պատին՝ արմատական վերակառուցման մասին XIII դարի սկզբում: Երկու արձանագրությունն էլ փորագրված են միևնույն տառաձևերով, միայն լեզվաոճային վերաբերող աննշան շեղումներով, որոնք լիովին կարող են բացատրվել նրանով, որ դրանք փորագրել են միաժամանակ ապրած ու աշխատած երկու տարբեր անհատներ: Եկեղեցին ամբողջությամբ երեսապատված է միատեսակ տաշված, նույնանման քարերով, անհնար է մատնանշել, թե որ մասերն են XIII դարում վերանորոգվածները և որոնք են պահպանվել նախնական տեսքով. դա հատկապես պարզ երևում է, երբ նայում ենք գմբեթին, որը ո՛չ շարվածքով և ո՛չ էլ տաշվածքով չի տարբերվում բուն եկեղեցուց, մինչդեռ այդ գմբեթն իր հովանոցաձև ծածկով չէր կարող պատկանել XI դարին: Այսպիսով պարզ է, որ ամբողջ եկեղեցին հիմքից մինչև գմբեթը վերանորոգվել է, իսկ արձանագրություններն արտագրվել են, ուստի և միևնույն տառաձևերով փորագրված ենք տեսնում և՛ կառուցման (XI դարի սկիզբը), և՛ նվիրատվական (XI դարի վերջը), և՛ վերանորոգման (XIII դարի սկիզբը) արձանագրությունները: Այդ արձանագրություններն արտագրողներին չէին կարող խանգարել ընդօրինակման աշխատանքների հետ կապված դժվարությունները ու ծախսերը, քանի որ ինչպես կառուցման, այնպես էլ XI դարի մի այլ արձանագրության մեջ թվարկվում են վանքին արված բազմաթիվ նվիրատվությունները, որոնց վիթխարի արժեքը լիովին արդարացնում է թանկագին վավերագիրը հավիտյան պահպանելու ծախսերը: Այդպիսի մի քանի օրինակներ էլ կարելի է բերել: Նույն կարգի, բայց փոքր ինչ տարբեր երևույթ է նկատվում հավանաբար մեզ հասած հնագույն՝ կտիտորական արձանագրություններում: Մի շարք նկատառումներով, որոնց շարադրանքն ինձ հեռու կտաներ, կարելի է ենթադրել, որ նշված արձանագրություններն իրենց այժմյան տեսքով միշտ չէ որ ժամանակակից են այն փաստերին, որոնց մասին պատմվում է նրանցում. տվյալ դեպքում ավելի հավանական է, որ նրանք տաճարների պատերի վրա արտագրվել են ոչ թե պատերի կամ քարերի վրայից, այլ ձեռագրից (թղթի կամ մագաղաթի), իսկ այդ արտագրության պատճառներն ու նպատակները նույնն են եղել, ինչ Մարմաշենի արձանագրությունների դեպքում:

Նման պարագաներում արձանագրությունների արժեքը մասամբ նվազում է այն բանով, որ նրանք մեզ են հասել ոչ թե բնագրով, այլ ընդօրինակված, այնուամենայնիվ նրանք չեն կորցնում իրենց նշանակությունը, քանի որ նրանց բովանդակության իսկությունը չի կարելի կասկածել, այդ առթիվ որևէ հիմք չունենալու պատճառով: Սակայն կան դեպքեր, որ արձանագրության, անգամ բովանդակության իսկությունը կարելի է և պետք է վիճարկել, եթե այդպիսի պնդումը փոքր ինչ համարձակ է Տեկորի արձանագրությունների նկատմամբ, որոնք շատ կարևոր են վանքի պատմության համար և որոնք խմբագրված են փոքր ինչ անսովոր և անձնանունների ժամանակաչափոթ կուտակումով, ապա այն միանգամայն ակնհայտ է Աշոտ Ողորմածի սապանագրի վերաբերյալ Հոռոմոսում և, թերևս, Սենեքերիմ թագավորի և Պետրոս կաթողիկոսի սապանագրերի վերաբերյալ, որոնք գտնվում են Վարագա վանքում:

Սակայն մենք չենք կարող հնագրության տվյալների միջոցով ստուգել կասկածելի արձանագրությունների տարեթիվն այն պատճառով, որ հայկական վիմարձանագրության այդ կողմը հազիվ է շոշափվել, բստ որում շոշափվել է սխալ հիմունքներով: Արձանագրային գրության, փորագրումների, փակագրերի և միացումների անսահման բազմազանությունը, որը բացատրվում է ինչպես փորագրման ժամանակների տարբերությամբ, այնպես էլ հուշարձանի գտնված վայրով, բարդացնում են հայկական հնագրության խնդիրները: Վիմագրության բնագավառում հնագրության տվյալների մասին համարյա բոլոր պնդումները, որոնց մինչև օրս հանդիպել ենք հայկական ոչ հարուստ հնագրական գրականության մեջ, հիմնված են չստուգված, անհիմն, երբեմն էլ կանխակալ դատողությունների վրա: Բավական է ասել, որ Էջմիածնում հիանալի աղյուսակներով հրատարակված հատուկ հնագրական

տոլասում չի գիտակցված, նույնիսկ չի ենթարկված գրի զարգացման մեջ անդական գործոնի նշանակությունը, որը երբեմն ավելի իրական է, քան ժամանակի գործոնինը[1]:

Հայաստանի պատմաբանը, հնագետը, ընդհանրապես հայկական վիմական արձանագրություններով հետաքրքրվողը չի գտնվում այն նպաստավոր պայմանների մեջ, որոնցում է լատինական կամ հունական արձանագրություններով զբաղվողը, որի տրամադրության տակ են դրված արձանագրությունների սպառիչ, համակարգված ժողովածուներ՝ ստույգ որոշված տեքստով, ընդ որում արձանագրությունների մեծ մասն արդեն հետազոտված է և այս կամ այն չափով գիտականորեն մշակված:

Չխոսելով արդեն այն մասին, որ որևէ կերպ, լավ կամ վատ բացատրված հայկական արձանագրությունների թիվը երկու-երեք տասնյակից չի անցնում, մեր ձեռքի տակ չունենք նույնիսկ այնպիսի բնագրեր, որոնք հրատարակված լինեին ընդօրինակության ճշգրտությունն ապահովող բավարար երաշխիքներով:

Հայկական վիմական արձանագրությունների, իբրև պատմական հուշարձանների նկատմամբ հետաքրքրությունը առաջացել է շատ վաղուց: Ըստ էության հայկական արձանագրությունների առաջին հավաքողը եղել է Հայաստանի պատմիչ եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը (XIII դար): Նա իր աշխատության մեջ այլ վավերագրերի հետ միասին մտցրել է նաև մի շարք արձանագրություններ, ընդ որում արտագրված շատ մեծ ճշտությամբ: Հայկական արձանագրությունների հավաքման հաջորդ փուլը հանդիսանում է XVIII դարի վերջը, երբ արքեպիսկոպոս Հովսեփը (աշխարհական՝ իշխան Արղության), հավաքեց Սանահնի մի շարք արձանագրությունները և դրանք օգտագործեց Արղության իշխանների տոհմագրությունը կազմելու համար:

Նույն արձանագրություններին է նվիրված նաև Հովհաննես վարդապետ Ղրիմեցու աշխատանքը:

XIX դարի առաջին կեսերին երևան են գալիս Հայաստանի մի շարք նահանգների արձանագրությունների ժողովածուները, կազմված արքեպիսկոպոսներ Սարգիս Ջալալյանցի և Հովհաննես Շահխաթունյանցի կողմից, իսկ 60-ական թվականներին՝ Ներսես Սարգիսյանի ձեռքով: Այս կապակցությամբ երևան են գալիս նաև առանձին վանքերի արձանագրությունների մի շարք մանր ժողովածուներ՝ կազմված Ա. Մխիթարյանցի, Սեդրակյանի և ուրիշների ջանքերով:

Շահխաթունյանցի, Ջալալյանցի, Սարգիսյանի դասական դարձած աշխատությունները, ապա նաև Ալիշանի երկերը, որոնցում հսկայական և մեծարժեք նյութ է հավաքված՝ դեռ երկար ժամանակ չեն կորցնի իրենց նշանակությունը իբրև անփոխարինելի հավաքածուներ, որոնցում առավել կամ պակաս լրիվությամբ տրված են Հայաստանի տարբեր վանքերի արձանագրությունները: Չեն կորցնի իրենց նշանակությունը ոչ թե նրա համար, որ օժտված են ինչ որ բացառիկ արժանիքներով, օրինակ, բնագրերի բացարձակ ճշգրիտ ընդօրինակմամբ, այլ պարզապես այն բանի համար, որ հետագա հավաքողների աշխատությունները, սկսած Բարխուդարյանցից ու վերջացրած Լալայանով, Հարությունով և ուրիշներով, պահպանելով Շահխաթունյանցի և մյուսների բոլոր թերությունները, ոչ մի քայլ առաջ չանցան նրանցից: Ընդամենը հաճախ որպես նոր վերծանում է ներկայացվում հնի պարզ արտատպությունը: Թվարկված բոլոր աշխատությունների ընդհանուր թերությունը արձանագրությունների ոչ լիակատար ստույգ ընդօրինակությունն ու վերարտադրությունն է, ուր անպայման բացված են ոչ միայն փակագրերը, այլև պատվի նշանները. երբեմն բնագրերը լրացվում են առանց նշելու լրացված մասը (ըստ որում հաճախ լրացված գրերի քանակը չի համապատասխանում ջարդված մասի բռնած տարածությանը), արձանագրությունների տեղը հաճախ ոչ միայն անճիշտ ու անորոշ է նշանակված, այլև սխալ և, վերջապես, արձանագրությունները լրիվ չեն հավաքված:

---

[1] Այստեղ Հ. Օրբելին նկատի ունի Գ. Հովսեփյանի հրատարակած «Քարտէզ հայ հնագրութեան» աշխատությունը, որ լույս տեսավ «Շողակաթ» հայագիտական ժողովածուի մեջ 1913 թ. (ծան. խմբ.)։

Հայկական արձանագրությունների ուսումնասիրության մեջ խիստ գիտական մեթոդների կիրառման առաջին դեպքը Ն. Յ. Մառի «Նոր նյութեր հայկական վիմագրության» հոդվածն է: Դժբախտաբար դրանով էլ գործն ավարտվեց: Հոդվածի հեղինակի փորձերը՝ կազմակերպել հայկական և վրացական արձանագրությունների հավաքումն ու հրատարակումը, ոչ մի արդյունքի չհասան, երբ չհաշվենք Կոստանյանցի աշխատությունը: Վերջին ժամանակների միակ աչքի ընկնող երևույթը Գարեգին վարդապետ Հովսեփյանի «Հնագրական քարտեզի» հրատարակությունն է, որը պահպանելով գիտական հրատարակությունների բոլոր արտաքին կողմերը, երբեմն մեղանչում է հրատարակվող տեքստի և բնագրի անհամապատասխանությամբ:

Ներկայումս հայկական արձանագրությունների հրատարակությունը նոր ձև է ընդունում: Այդ արձանագրությունների ստույգ վերարտադրության համար անհրաժեշտ են հատուկ փակագրային տառանիշեր: Դեռևս 1909 թ., երբ Խաչենից բերված արձանագրություններում գտնվեցին 300-ից ավելի փակագրային տառաձևեր, անհրաժեշտություն զգացվեց հետագայում հայկական արձանագրությունները հրատարակել՝ պահպանելով փակագրերը, որը երբեմն, հատկապես անձնանուններում, բացման չի ենթարկվում: Այդպիսի տառանիշերի պատրաստման հետ կապված դժվարությունները ստիպեցին հետաձգել հրատարակման գործը: Այժմ երկամյա աշխատանքից հետո մեր տրամադրության տակ ունենք Կայսերական գիտությունների ակադեմիայի ձուլարանում պատրաստված փակագրերի հիմնական կոմպլեկտը (500-ից ավելի տառանիշեր): Այդ տառաձևերը առաջին անգամ կիրառվեցին „Христианский Восток“ հանդեսում՝ մի քանի արձանագրությունների հրատարակման ժամանակ: Այնուհետև երևան ելավ փակագիր տառաձևերով տպագրված, Անիի հնագիտական թանգարանի հրատարակած, իմ կողմից արտագրված և ստուգված Մարմաշենի արձանագրությունների ժողովածուն: Ներկայումս տպագրվում են Մրենի, Անիի արձանագրությունները, ինչպես նաև մեր ֆակուլտետի սան Ամբատ Տեր-Ավետիսյանի՝ գործի ամբողջ պատասխանատվությամբ կազմած աշխատությունը՝ Սանահնի արձանագրությունները, որը հրատարակում է Կայսերական գիտությունների ակադեմիան: Արձանագրությունները հրատարակվում են՝ պահպանելով նրանց բոլոր առանձնահատկությունները, ինչպես նաև փակագրային ձևերը, որոնք ուղեկցվում են նրանց վերծանությամբ և լիակատար ընթերցմամբ[1]: Ավելորդ է նշել, որ այդ ժողովածուների մեջ սպառիչ կերպով հավաքված են այն վանքերի արձանագրությունները, որոնց նվիրված են և տրվում են անհրաժեշտ լուսանկարները:

Այդ ժողովածուներով հայկական արձանագրությունների ապագա corpus-ի համար նյութերի հավաքման և նախապատրաստման սկիզբն են դրվում: Դժվար է ասել, որքան մեծ ու ընդարձակ կլինի այդ corpus-ը! Մենք պատկերացում չունենք մեզ հասած հայկական արձանագրությունների ընդհանուր թվի մասին: Մինչև այժմ հրատարակված արձանագրությունների թիվն այնքան էլ մեծ չէ: VII դարից՝ 13, VIII—IX դարերից՝ մոտ 20, X—XII դարերից՝ մոտ 250, XIII դարից՝ մոտ 600, XIV—XVI դարերից՝ մոտ 200, XVII—XVIII դարերից՝ մոտ 200, անթվակիր՝ մոտ 200, ընդամենը 1500: Սակայն արձանագրությունները հաշվելիս չի կարելի վստահել հրատարակություններին. հեշտ այցելվող, փառաբանված վայրերում, որտեղ աշխատանքի հարմարություններ կան, արձանագրությունները հավաքված են ավելի լրիվությամբ, քան խուլ, դժվար մատչելի վայրերում: Օրինակ Սանահնում Ս. Տեր-Ավետիսյանին հաջողվեց արդեն հրատարակված 77 արձանագրություններին ավելացնել 19-ը, մինչդեռ դժվարամուտ Ղարաբաղի Կոշիկ անապատում, որտեղ Բարխուդարյանցը արտագրել է 3 արձանագրություն, ինձ բախտ վիճակվեց հավաքել 29-ը, հենց այնտեղ, Խաթրա մենաստանում Բարխուդարյանցի 13 արձանագրությունների փոխարեն հավաքեցի՝ 35:

Չխոսելով արդեն այն գանձերի մասին, որոնք ծածկված են հին շենքերի ավերակների կամ բերածո ավազների տակ, կարելի է պատկերացնել, թե որքան նյութ ենք հայտնաբերելու

[1] Հիշյալ արձանագրությունների հրատարակությունը չիրականացավ (ծանոթ. խմբ.)։

դեռևս, երբ նույնիսկ պեղումներով չզբաղվենք, այլ միայն հավաքենք այն, ինչ գտնվում է հողի մակերեսին, և այդ գործում պետք է շտապել:

Նրանց, ովքեր ծանոթ են Կովկասում հնության հուշարձանների պահպանության վիճակին, իհարկե, զարմանք չի պատճառի, որ Էջմիածնի մոտ գտնվող Օշականի վանքի պատերի չափազանց հետաքրքրական արձանագրությունները ոչնչացվեցին, ջնջվեցին կամ ծեփով ծածկվեցին սոսկ այն նպատակով, որպեսզի բարեկարգ տեսք տրվի այն վայրին, որտեղ ամփոփված է հայկական այբուբենը հնարողի աճյունը, այն մարդու, որի 1500-ամյա հոբելյանը այնպիսի հանդիսավորությամբ նախանցյալ տարի տոնվեց Օշականում:

Կովկասում ամենուրեք հնության հուշարձանների ոչնչացման մասին բողոքներ են լսվում, դրանք դարձել են Կովկասի հնագիտության մասին բոլոր հաղորդումների, հոդվածների, զեկուցումների ու դասախոսությունների մշտական ու ձանձրալի կրկներգը: Սակայն տվյալ դեպքում մեզ վշտացնում է ոչ թե հուշարձանների պատահական, դիտավորյալ, կամ տգիտությամբ կատարված փչացումը, այլ ավելի տխուր ու վտանգավոր երևույթը՝ արձանագրությունների չարանենգ ոչնչացումը: Բավական էր անհեթեթ լուր տարածվեր, թե դատարանը խաչենի բեկերի և հայկական հոգևոր իշխանության միջև ծագած հողային վեճերը վճռելիս ղեկավարվելու է ոչ միայն ռուսական կալվածատիրական իրավունքի նորմաներով, այլև հայկական հնագույն արձանագրություններով, որպեսզի բեկերի ամբոխը Գանձասարի շրջակայքում ջնջեր XII—XIII դարերի մեկ ու կես տասնյակ արձանագրություն, նպատակ ունենալով ոչնչացնել այդ հողերի վանքապատկան լինելը ապացուցող վավերագրերը: Նույն երևույթը նկատվում է նաև մյուս վանքերում: Պարզ է, թե որքան ժամանակին է ներկայումս պեղումների հետ զուգահեռ, չծածկված և այդ պատճառով պատահականություններին ավելի ենթակա վիմագրական բնագրերի հավաքման ուղղությամբ լայն աշխատանքների կազմակերպումը: Այդ գործն արդեն հաստատուն և հաջող կազմակերպված է Շիրակում, անհրաժեշտ է, քանի դեռ ուշ չէ այն տարածել նաև Հայաստանի մյուս նահանգներում:

Այսպիսով, դեռևս ոչինչ չի արված, ավելի ճիշտ շատ քիչ բան է արված, որպեսզի հետազոտողի տրամադրության տակ դնենք ստույգ ընդօրինակված վիմագրական նյութը, որը միայն ուսումնասիրության և մշակման կարիք ունենար: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր ոք, որը թեկուզ զուգընթացաբար հետաքրքրվում է հայկական արձանագրություններով, ստիպված է անմիջականորեն դիմել բնագրին: Հայկական արձանագրությունները ուսումնասիրել, առանց ազատ կարդալու նրանց բնագիրը, առայժմ անհնար է: Պարզ է, որ մենք էլ, թեև հետաքրքրվում ենք արձանագրությունների միայն բովանդակությամբ, մեր դասընթացի հիմքում դնելու ենք ոչ միայն նրանց բովանդակության ուսումնասիրությունը, այլև բնագրի հետ ծանոթանալը, կամ, որովհետև այդ հնարավոր չէ անել այստեղ, գոնե լուսանկարների ու էստամպաժների օգնությամբ կատարել նման աշխատանք:

Մեր դասընթացը նվիրված է Հայաստանի վիմագրական հարուստ ժառանգության մի աննշան մասի՝ Շիրակի արձանագրություններին: Առաջիկա դասընթացի համար Շիրակի արձանագրությունների ընտրությունը պայմանավորվում է գլխավորապես արտաքին պատճառներով: Շիրակն իր երբեմնի մայրաքաղաք, հետագայում վարչական, առևտրական ու արդյունաբերական կենտրոն Անի քաղաքով Հին Հայաստանի համարյա միակ նահանգն է, որտեղ աշխատանքներ են տարվում հնության հուշարձանների, մասնավորապես արձանագրությունների հավաքման և ուսումնասիրության ուղղությամբ: Այստեղ մենք ունենք առավել վստահելի նյութեր՝ գիտականորեն ստուգված, զգալի մասով լուսանկարված, իսկ երբեմն նաև էստամպաժի ենթարկված արձանագրություններ: Արձանագրությունների բնագրերի հետ ծանոթանալ ցանկացողների համար հենց այստեղ կան բոլոր հարմարությունները պատմական վայրերն այցելելու համար, չկան այն դժվարությունները, որոնց հետ կապված են Խաչենի կամ Լոռու ձորերի դժվարամուտ ճանապարհները: Մեր ընտրությունը կարելի է արդարացնել նաև նրանով, որ ըստ գրական աշխատությունների Շիրակն ավելի է ծանոթ, քան մյուս նահանգները:

Մենք կանգ կառնենք հիմնականում Շիրակի շինարարական արձանագրությունների վրա: Համարյա յուրաքանչյուր այդպիսի արձանագրություն, հուշարձանի կառուցման կամ վերանո-

խոզման մասին տեղեկություններից բացի, ցուցումներ ունի նաև հովանավորողի կողմից այդ եկեղեցուն տրված նվերների և դրանց դիմաց եկեղեցու կողմից հովանավորողին տրված պարտադիր պատարագների վերաբերյալ. հաճախ էլ որոշումներ կան վանքին ու եկեղեցուն տրված այլ արտոնությունների մասին (օրինակ՝ ջրի օգտագործման և հարկերի վերաբերյալ):

Այսպիսով, զբաղվելով շինարարական արձանագրություններով, կարելի է գաղափար կազմել հայկական վիմական արձանագրությունների գերազանցապես տարածված բոլոր չորս ձևերի մասին: Միաժամանակ հնարավորություն է ընձեռվում հուշարձանների ամենահետաքրքիր և գլխավոր մասը՝ արձանագրությունները ցուցադրել նյութական փաստերով՝ լուսանկարներով:

Հ. ՕՐԲԵԼԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

XIX դարի հասարակական միտքը ստեղծեց բազմաթիվ նոր գիտություններ, մյուս կողմից՝ արդեն գոյություն ունեցող մի շարք ընդհանուր գիտություններից առաջացան մասնակի գիտություններ. մասնավորապես ընդհանուր պատմագիտությունից անջատվեցին և ինքնուրույն գիտության աստիճանի հասան իրար հետ սերտորեն կապված հնագիտությունն ու արձանագրագիտությունը:

Ինչպես ամեն մի գիտություն, արձանագրագիտությունն էլ մինչև ինքնուրույն գիտական բնույթ ստանալը ունեցել է իր երկարատև նախապատրաստական շրջանը:

Նկատի չառնելով ավելի հին շրջաններում եղած մասնակի աշխատանքները (արձանագրությունները օգտագործելու դեպքեր), պետք է ասել, որ արձանագրագիտության իսկական հիմքը դրվեց Վերածնության դարաշրջանում: «Արձանագրագիտության հայր» է համարվում իտալացի Կիրիակո Անկոնացին (1391—1452): Այդ մեծ և անխոնջ հումանիստը շրջում է ամբողջ Հունաստանը, փոքրասիական հունական քաղաքները, Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, նկարագրում է իր հանդիպած հուշարձանները և արտագրում նրանց վրա պահպանված արձանագրությունները: «Արձանագրագիտության հոր» վարակիչ օրինակին հետևեցին շատ ուրիշներ, որոնց ջանքերով այնքան մեծ նյութ հավաքվեց, որ արդեն 1603 թ. Հեյդելբերգի համալսարանի պրոֆեսոր Գրուտերը կազմեց իր հայտնի ժողովածուն, որը պարունակում է 12 հազար արձանագրություն (հիմնականում լատինական):

Պատմության և մշակույթի բոլոր բնագավառների համար անսպառ և թարմ նյութեր պարունակող այդ հսկայական ժողովածուն մեծ հետաքրքրություն առաջացրեց ամբողջ Եվրոպայում, և բազմաթիվ գիտնականներ սկսեցին զբաղվել նոր արձանագրություններ հայտնաբերելու և հրատարակելու գործով. միաժամանակ Ֆրանսիայում կազմակերպվեց հատուկ «Արձանագրությունների ակադեմիա», իսկ Անգլիայում և այլ երկրներում հատուկ «ընկերություններ» այդ նույն նպատակներով:

Մինչև XIX դարը, սակայն, արձանագրագիտությունը ինչպես նաև հնագիտությունը համարվում էին ընդհանուր պատմությանը օժանդակող ճյուղեր միայն, չէին մշակված այդ դիսցիպլինների ուսումնասիրության և հավաքման հատուկ մեթոդներ, չկային այդ նպատակների համար մասնավորապես պատրաստված և հատկապես միայն դրանցով զբաղվող մասնագետներ: Այդ աշխատանքները վերապահված էին XIX դարին: Այդ դարի պրպտող գիտական միտքը ոչ միայն մեծ թվով նոր արձանագրություններ հայտնաբերեց, այլև պարզեց, որ նախորդ դարերում հավաքված հսկայական արձանագրական նյութն ունի լուրջ թերություններ. հավաքված լինելով ոչ մասնագետների ձեռքով և ոչ միատեսակ մեթոդներով, եղած հրատարակությունները մեծ չափերով տարբերվում էին թե՛ իրարից և թե՛, մանավանդ, բնագիր սկզբնաղբյուրներից: Կարիք զգացվեց մշակել արձանագրությունների հավաքման հատուկ և ընդհանուր մեթոդ. հավաքված հսկայական նյութի ի նորո ստուգումը և նոր նյութերի հավաքման անհրաժեշտությունը միատեսակ ձևի կիրառմամբ արդեն այնքան բարդ աշխատանքներ էին, որ դժվար էր նրանց համատեղել այլ աշխատանքների հետ. անհրաժեշտաբար առաջացավ մի նոր մասնագիտություն՝ արձանագրագիտությունը:

Միաժամանակ նախկինում հայտնի միայն հունական և լատինական արձանագրությունների կողքին ավելացան Արևելքի բազմաթիվ այլ հին ժողովուրդների արձանագրական նյութերը, ինչպես եգիպտական, սիրիական, ասորա-բաբելական, հեթիթական և ուրիշներ: Այս հանգամանքն էլ իր հերթին խթան հանդիսացավ, որ ընդհանուր արձանագրագիտությունը բաժանվի առանձին ժողովուրդների մասնակի գիտության իր հատուկ աշխատողներով:

Այսպիսով, ճյուղավորված, գիտական հիմքերի վրա դրված և հատուկ մեթոդներով ու մասնագետներով զինված նոր գիտությունը՝ արձանագրագիտությունը ձեռնամուխ եղավ հավաքելու և պատմական, լեզվական ու բանասիրական մանրակրկիտ ուսումնասիրությունների ենթարկելու յուրաքանչյուր հին ժողովրդի թողած արձանագրական նյութերը: Արդյունքը եղավ փայլուն, կազմվեցին, հրատարակվեցին ու դեռևս շարունակվում են հրատարակվել հունական, լատինական, սեմական, ուրարտական և այլ բազմաթիվ ժողովուրդների արձանագրությունների մեծահատոր ժողովածուները՝ կորպուսները: Այժմ այդ կարևոր գործը կատարվում է անվանի գիտնականների ձեռքով և ակադեմիաների միջոցներով:

* * *

Հայերեն արձանագրությունները որպես պատմական ու մշակութային սկզբնաղբյուրներ օգտագործելու, հավաքելու ու հրատարակելու գործն ունի իր պատկառելի անցյալը:

Ի պատիվ հայ պատմագրական մտքի, պետք է նշել, որ դեռևս մեր հին մատենագիրներից ոմանք ճիշտ են հասկացել Հայաստանում գտնված օտար և հայ լեզուներով պահպանված արձանագրությունների մեծ արժեքը և օգտագործել են իրենց աշխատությունների մեջ: Գիտական այսպիսի մոտեցման վաղագույն փորձի պատիվը պատկանում է հայոց պատմահայր Մովսես Խորենացուն: Իր հայտնի «Պատմության» մեջ Խորենացին որպես սկզբնաղբյուրներ, օգտագործել է իր ժամանակ Հայաստանի տարբեր մասերում պահպանված, տարբեր լեզուներով գտնվող արձանագրություններ՝ արամեերեն և հունարեն:

Սեպագիր ուրարտերենը Խորենացու ժամանակ արդեն մեռած լեզու էր և անմատչելի որևէ մեկի համար, բայց և այնպես պատմագիրը հասկացել է նրանց գիր լինելու հանգամանքը: Ավանդաբար Շամիրամին վերագրելով ուրարտական շրջանից մնացած բոլոր հուշարձանները, այդ թվում նաև Վան քաղաքի և Վանի (Շամիրամի) ջրանցքի կառուցումը, պատմագիրը Վանի մոտ գտնվող ժայռի վրայի սեպագիր արձանագրությունները համարում է այդ հսկա շինությունների առթիվ գրված հիշատակագրություններ: Ականատես զննողի անմիջական տպավորությամբ և գեղեցկորեն նկարագրելով այդ իրոք մեծագործ կառուցումները և սեպագիր հիշատակագրությունների դժվարությունն ու զարմանալու արժանի գեղեցկությունը, նա ավելացնում է.

«Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»[1]:

Եթե Խորենացին անծանոթ սեպագրերի միայն փաստն է հիշատակում և կռահում նրանց նշանակությունը, ապա իրեն համար մատչելի ու հասկանալի արամեերեն ու հունարեն արձանագրությունները օգտագործում է արդեն իրենց իսկական բովանդակությամբ՝ պատմա-մշակութային երևույթներ վեր հանելու նպատակով: Արտաշես թագավորի գործունեության ընդհանուր նկարագրությունից հետո, նրա կարևոր ներքին գործունեության, երկրի ներսում սահմաններ նշելու փաստը պատմագիրը երևան է հանում Արտաշեսի կողմից կանգնեցրած սահմանաքարերի վրա գրված արամեերեն արձանագրությունների միջոցով:

Պատմագիրն այդ սահմանաքարերի և՛ արտաքին նկարագրությունը, և՛ նրանց վրայի արձանագրությունների բովանդակությունը տվել է շատ ստույգ կերպով: Վերջին տասնամյակներում հայտնաբերված մի քանի այդպիսի սահմանաքարերը հաստատում են Խորենացու հաղորդածների ճշտությունը[2]:

---

[1] Տե՛ս Մ. Խորենացի, *Պատմութիւն*, էջ 54, Տփղիս, 1913:
[2] Անդ, էջ 186:

Մեծ պատմագրի ուշադրությունից չի վրիպել նաև Գառնի բերդի պարսպի վրա եղած հունարեն արձանագրությունը, որի բովանդակության վերծանումով նա յուրովի իմաստավորել է տրդատաշեն այդ հոյակապ հուշարձանի պատմությունն ու նկարագրությունը[1]:

Երկրորդ պատմագիրը, որն առատորեն օգտագործել է արդեն հայկական արձանագրությունները, Խորենացուց ութ դար հետո ասպարեզ իջած Ստեփանոս Օրբելյանն է: Սյունյաց նահանգի պատմությանը նվիրած իր հայտնի աշխատության մեջ, հատկապես ներքին կյանքին և վանքերի ու եկեղեցիների շինարարության գործին վերաբերող ողջ պատմությունն Օրբելյանը քաղել է Տաթևի վանքի «մատենադարանում» պահվող վավերագրերից և եկեղեցիների պատերին փորագրված արձանագրություններից:

Օրբելյանը ոչ միայն օգտագործել է արձանագրությունների բովանդակությունը, այլև նրանցից շատերը արտագրել և զետեղել է իր աշխատության մեջ: Պատմագրի գիտական այդ բարեխիղճ մոտեցման շնորհիվ կորստից փրկվել են բազմաթիվ արձանագրություններ: Հատկապես պետք է նշել և այն, որ Օրբելյանի պատմության մեջ զետեղված այն արձանագրությունների համեմատությունը, որոնք մինչև այժմ էլ մնացել են տեղերում, ցույց է տալիս, որ Օրբելյանն ավելի ճիշտ է արտագրել, քան XIX դարի ճամփորդներից ոմանք: Պատմագիրը օգտագործած բազմազան աղբյուրները հիշատակում է իր աշխատության սկզբում. դրանք են՝ բոլոր հայ պատմիչները, Տաթևի վանքի արխիվում պահվող թագավորների, սյունյաց իշխանների և կաթողիկոսների նամակներն ու հրովարտակները «և յարձանագրութեանց եկեղեցեաց և յիշատակարանաց գրոց»[2]:

Երրորդ հայ պատմիչը, որը նույնպես մեծ թվով արձանագրություններ է արտագրել իր աշխատության մեջ, դա XVII դարի պատմագիր Զաքարիա Սարկավագն է: Զաքարիան Հովհաննավանքի արձանագրությունների հիման վրա կազմել է այդ վանքի «կոնդակը»: Զաքարիայի ժողոված արձանագրությունները հրատարակված են նրա Պատմության վերջում, որպես երրորդ հատոր, հետագայում տեղագիր հեղինակները՝ Շահխաթունյանցն ու Ալիշանը հենց Զաքարիայի գրքից էլ արտագրել են Հովհաննավանքի արձանագրությունները: Զաքարիա Սարկավագի այդ շնորհակալ գործի արժեքը ցույց տալու համար անհրաժեշտ ենք համարում մեջ բերել մեծ հայագետ Մ. Աբեղյանի այդ առթիվ գրած խոսքերը.

«Զաքարիա Սարկավագը բացի մատենագիրներից ու գրքերի հիշատակարաններից՝ օգտվում է նաև արձանագրություններից. նա ընդօրինակում է պատերի վրա եղած արձանագրությունները և մանրամասն ճշտություն մտցնում յուր կոնդակի մեջ, որով Զաքարիան հանդիսանում է մեր հնագրական արձանագրական բանկագին հիշատակարանները ժողովողների նախահայրը: Մի բան, որ շատ կարևոր է»[3]:

Այս կամ այն չափով հայկական արձանագրություններ հնում հավաքվել են նաև շատ յուրահատուկ ձևով: Հայաստանի մի շարք վանքեր ժամանակի ընթացքում գնումների, նվիրատվությունների և թագավորներից ու իշխաններից ստացած արտոնությունների շնորհիվ տնտեսապես չափազանց ուռճացել էին. իրենց այդ դիրքը հաստատուն և ժառանգական դարձնելու և հետագա ոտնձգություններից ու վեճերից ապահովելու համար վանքերը կազմում էին հատուկ մատյան-Կոթուկներ, որոնց մեջ ստորինաբար արտագրվում և պահվում էին վանքի հետ կապված նման բոլոր գործարքներին վերաբերող փաստաթղթերի պատճենները. քանի որ յուրաքանչյուր վանքի պատերի վրա գրված արձանագրությունների մեծ մասն էլ հիշված գործարքներին վերաբերող փաստագրեր են, ապա դրանց մեծ մասը արտագրվել են այդ Կոթուկների մեջ: Արժեքավոր այս ձեռնարկության շնորհիվ շատ արձանագրություններ, որոնք կարող էին ոչնչանալ հետագա նորոգումների ժամանակ կամ հնանալով՝ բոլորովին եղծվել, փրկվել են: Նման մատյան-Կոթուկներ են ունեցել Սանահնի,

---

[1] *Անդ*, *էջ 242*։

[2] Ստ. Օրբելյան, *Պատմութիւն նահանգին Սիսական*, *էջ 10*, *Թիֆլիս*, *1911*։

[3] Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, *հատ.* II, *Երևան*, *1946*, *էջ 455*։

Չենք հիշատակում այլ պատմագիրների, որոնք ավելի քիչ չափով են օգտագործել արձանագրությունները, ինչպես, օրինակ, Կ. Գանձակեցին։

Սաղմոսավանքի, Լիմի և Կտուց անապատի վանքերը: Ցանկերը դրանցից չեն պահպանվել. մնացել են Սանահինի Քոշուկի երկու օրինակները, որոնք պահպանվում են մեր Մատենադարանում և որոնցից օգտվել է Կ. Ղաֆադարյանը Սանահինի վանքի արձանագրությունների իր հրատարակության մեջ[1]: Իսկ Աղվանից Եսայի կաթողիկոս Հասան Ջալալյանի կազմածը, 1718 թ. լրիվ ընդօրինակել է Շահխաթունյանցը[2]:

Հայկական արձանագրությունների սիստեմատիկ հավաքման և հրատարակման գործն սկիզբ է առել XIX դարի առաջին կեսից: XIX դարի գիտական մտքի ընդհանուր վերելքը Եվրոպայում և դրա հետ կապված ընդհանուր հետաքրքրությունը դեպի հին արձանագրությունները՝ անարձագանք չեն մնում նաև Հայաստանում: Չնայած դարասկզբի տասնամյակների ավերիչ պատերազմներին և մասսայական տեղափոխություններին, հայ իրականության մեջ գտնվում են առանձին անհատներ, որոնք ուշադրություն են դարձնում այդ կարևոր գործի վրա: Այդպիսիներից էր առաջին հերթին Ներսես Աշտարակեցին: Քաղաքական և եկեղեցական այդ եռանդուն գործիչը, իր բազմապիսի գործունեությանը զուգընթաց, զբաղվել է նաև արձանագրությունները հավաքելու և կորստից փրկելու գործով: Մատենադարանում գտնվող նրա արխիվում պահպանվել է մի նամակ՝ գրված 1825 թ. օգոստոսի 31-ին, ուղղված Հարություն վարդապետին, որով կարգադրում է հավաքել վանքերի, եկեղեցիների և գերեզմանաքարերի վրա գտնվող բոլոր արձանագրությունները: Այդ կարևոր փաստաթղթի մեջ տրված են արձանագրությունների նշանակության և հավաքման մասին այնպիսի հրահանգներ, որոնք, հիմնականում, այժմ էլ չեն կորցրել իրենց արժեքը:

Նկատի ունենալով, որ այդ հրահանգ-նամակով փաստորեն հիմք է դրվել մի նոր և կարևոր գործի և այն, որ չհրատարակված այդ փաստաթուղթը պարզում է Աշտարակեցու գործունեության մի կարևոր բնագավառ ևս, մեջ ենք բերում այդ նամակն ամբողջովին.

Արժանապատիւ Յարութիւն վարդապետ.

Որպէս ասացի քեզ ի դէպ համարեցաք ասել. այնպէս ահա գրեմ քեզ զի թէ չգոյէ արգելք իմն ի կանխածանց վնասուց իրիք, ոչ անազան զաշխատանս ի գործ եդեալ ջան ունիցիք հաւաքել զամենայն զյիշատակագրութիւնս գտանեցեալ ի վերա բարաւորաց դրանց եկեղեցեաց կամ ի վերայ որմոց նոցին ի ներքուստ և արտաքուստ և կամ ի վերա գերեզմանաքարա(ն)ց հնազունից հոգեւորականաց և մարմնականաց, և զգուշաւոր ուղղագրութեամբ բերել առ մեզ վասն տպել տալոյ յաղագս յաւիտենական ապահովութեանց յիւրաքանչիւրոց նոցին, զի մի հնութիւն ժամանակաց հնարեսցի կորուսանել զայնս և ի ձեռն փտութեանց կամ հակառակորդաց ոմանց:

Այլ պատուիրեմ յատկապէս զի որքան կարօղ լինիցիք մի ծուլասջիք վասն դժուարութեան լերանց և ձորոց յորս գտանիցին եկեղեցիք, զանցառու. լինիլ անհոգաբար, քանզի պարտէ զմտաւ ածել նախ զերախտի շինողացն զայնս, և զսէր նոցին ըստ հաւատոյ, և այնպէս ապա վասն հաւատոյ լինիլ հետամուտ առ անջնջելի առնել զայնս, որով գտանիք հաղորդակից նոցին բարեպաշտութեանց և ես ևս եղեց ձեզ շնորհակալ:

Եւ զայս ոչ անդէպ համարիմ յայտնել ձեզ, զի ուր ուրեք գտանիցին գրուածք զորս ոչ կարողասջիք դուք կարդալ, նշանակեսջիք զտեղի այնպիսեացն թէ ի վերա որ եկեղեցւոյ ի վերա որ կողման որմոյ նորին գտանի գրուածն դժուարընթերց:

Համար 196
1825 օգոստոսի 31[3]:

Հարություն վարդապետ Տեր-Բարսեղյանց Շնողեցին (հետագայում եպիսկոպոս և արքեպիսկոպոս) Սանահինի վանքի առաջնորդն էր, նա 1831 թ. շինել է նաև այդ վանքի ադ-

---

[1] Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 65:*

[2] Շահխաթունեանց Յովհաննէս եպիսկոպոս, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն նորին, հատ. Բ, Էջմիածին, 1842, էջ 306—382:*

[3] *Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 378: Այս վավերագիրը մեզ մատնացույց արեց Հ. Փափազյանը, որին և հայտնում ենք խորին շնորհակալություն—Ս. Բ.:*

բյուրը և այդ մասին նրա նախատիպ գրել իր հիշատակագրությունը[1]: Հարություն վարդապետի հավաքած արձանագրությունները չեն պահպանվել, բայց կողմնակի փաստերից երևում է, որ նա իրոք հավաքել և կազմել է մի ժողովածու, որից հետագայում օգտվել են ուրիշները. այդ մասին Դուզիկրունին (Գ. Հովհաննիսյան) գրել է.

«Հաղբատում և Սանահինում մեզ ասացին ժամանակակից գիտակ անձինք, թե հանգուցյալ Ջալալյանցն ինքն անձամբ չէ ժողովել վանքերի արձանագրությունները, այլ ուղղակի օրինակել է Շնողեցի Հարություն եպիսկոպոս Տեր-Բարսեղյանցի ձեռագրից»[2]:

Պետք է հավատալ, որ Ներսես Աշտարակեցին նման բանավոր և գրավոր հրահանգներ Հարություն վարդապետից բացի պետք է տված լիներ նաև ուրիշներին: Մի բան պարզ է, որ եթե Աշտարակեցին դեռևս աթոռակալությունից առաջ կարող էր սահմանափակ անձանց նման հանձնարարություններ տալ, ապա կաթողիկոս դառնալուց հետո շատ ավելի մեծ հնարավորություններ ուներ իր այդ մտահղացման իրագործման համար:

Պարզ է նաև, որ XIX դարի երրորդ տասնամյակում հայկական արձանագրությունների հավաքման-հրատարակման գործի անհրաժեշտությունն արդեն գիտակցված էր և այդ գործի մեջ մեծ դեր էր կատարում ժամանակի ամենահեղինակավոր անձնավորությունը՝ Ներսես Աշտարակեցին: Այդ թվականներից էլ սկսեցին մեկը մյուսի հետևից լույս տեսնել ճամփորդական-տեղագրական մեծածավալ աշխատություններ, որոնց մեջ մեծ տեղ են գրավում հուշարձանների նկարագրությունները ու դրանց պատերի վրա եղած արձանագրությունների արտագրությունները:

Ռուսների հաղթական առաջխաղացումը դեպի Հայաստան և դրա հետ կապված հայ ժողովրդի ազատագրական դարավոր հույսերի աննախընթաց վերելքը խթան են հանդիսանում, ի թիվս այլ ձեռնարկումների, նաև առանձնահատուկ հետաքրքրության դեպի հայրենի երկիրն ու նրա հնությունները: Ծնունդ է առնում պատմա-բանասիրական գրականության մի նոր ճյուղ, ճամփորդական-տեղագրական գրականությունը, որի բովանդակության առանցքը կազմում է հայրենի բնության, աշխարհագրության, շեն ու ավեր գյուղերի և քաղաքների, վանքերի և եկեղեցիների, բերդերի ու կարավանատների, ժողովրդի զբաղմունքի նկարագրությունը. նաև շեն ու ավեր հուշարձանների շրջակայքում և պատերի վրա եղած արձանագրությունների հավաքումը:

Մինչև XIX դարի կեսերը, քսան տարվա ընթացքում, իրար հետևից լույս են տեսնում բանասիրության մեջ հանրահայտ Բժիշկյանի (1830), Շահխաթունյանցի (1842), Ջալալյանցի (1842—1858) աշխատությունները, հինգ ծավալուն հատորներ, որոնց մեջ ամփոփված են մի քանի հարյուր արձանագրություններ: Պատմագրական գրականության այդ նոր ճյուղն իր նոր շնչով և, մանավանդ, պատմական ու կուլտուրական խնդիրները նոր և թարմ նյութերով ճիշտ պարզաբանելու համար մեծ հետաքրքրություն են առաջացնում թե՛ հասարակության և թե՛ մանավանդ գիտնականների շրջաններում: Արդյունքը լինում է այն, որ բազմաթիվ մարդիկ լծվում են նման աշխատանքների, հրատարակվում են բազմաթիվ նորանոր աշխատանքներ՝ ընդգրկելով աշխարհագրական մեծ և փոքր տարածություններ, նաև մամուլի մեջ (ամսագիր և օրագիր) բազմաթիվ տեղեկություններ ու հոդվածներ են տպագրում՝ առանձին գյուղերի ու հուշարձանների նկարագրություններով և արձանագրությունների վերծանմամբ:

Ճամփորդական-տեղագրական գրականությունը ամուր արմատներ բռնեց հայ պատմագիտական գրականության մեջ, դարձավ աշխատանքի կայուն և ինքնատիպ բնագավառ և հասավ մինչև մեր օրերը: Այդ աշխատանքով զբաղվեցին ոչ միայն քաղաքներում ապրող մտավորականները, այլև գյուղերում աշխատող ժողովրդական մտավորականության լավագույն ներկայացուցիչները:

XIX դարի երկրորդ կեսին լույս տեսան էլ ավելի շատ տեղագրական աշխատություններ, որոնց մեջ, նախորդների նման, արձանագրությունները բռնում են իրենց պատկառելի

---

[1] Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները*, *Երևան*, *1957*, *էջ 162*:

[2] *«Արձագանք», 43, 1884, էջ 628*:

տեղը: Դրանցից ամենանշանավորներն են Ներսես վ. Սարգսյանի, Արեն վ. Մխիթարյանի, Գարեգին վ. Սրվանձտյանցի, Քաջբերունու (րժ. Գաբրիել Հովհաննիսյան), Մակար Բարխուդարյանցի, Մեսրոպ արք. Սմբատյանցի և այլ բազմաթիվ հեղինակների հանրահայտ աշխատությունները: Վերջապես մեծատաղանդ Ղևոնդ Ալիշանի չորսհատորյա տեղագրական կոթողային աշխատությունները, որոնց մեջ խնամքով ամփոփված են նկարագրվող վայրերից մինչ այդ հրատարակված բոլոր արձանագրությունները. տեղին ենք համարում մեջ բերել մեծ հայագետի մոտեցումը հանդեպ արձանագրությունները դեռևս իր տեղագրական առաջին աշխատության՝ Շիրակի մեջ: *«Որչափ ինչ գտանեմ արձանագրութիւնս՝ գամենայն կամիմ մուծանել ի տեղագրութիւնս, որոյ և պատուականագոյն մասն համարիմ»*[1]:

Հայկական արձանագրությունների պատմա-բանասիրական արժեքն ըստ արժանվույն գնահատեցին նաև օտար գիտնականները, որոնցից մի քանիսը նույնիսկ մասնակից եղան նրանց հավաքման և հրատարակման գործին. դրանցից հիշատակելի են Բրոսսեն, Լանգլուան, Դյուրուան: Մի խումբ հայազգի գիտնականներ էլ ռուս բանասիրությանը ներկայացրին հայկական արձանագրությունների մի զգալի քանակություն. վերջիններից հատկապես արժանի են հիշատակության Ալեքսանդր Երիցյանը, Մկրտիչ Էմինը, Խաչատուր Հովհաննիսյանը և ուրիշներ[2]:

Քսաներորդ դարի առաջին տասնամյակներում էլ արձանագրությունների հավաքման ու հրատարակման աշխատանքներն ընթանում են նույն մեթոդներով, կրկին որպես կցորդ հիմնականում տեղագրական աշխատությունների. բայց մի առավելությամբ. դա այն է, որ երբեմն հրատարակվող արձանագրություններին կցվում են նաև նրանց լուսանկարները: Այս շրջանի ամենաբեղմնավոր, թեև ոչ բավարար որակով արձանագրություններ հավաքող և հրատարակողը եղել է ազգագրագետ Ե. Լալայանը, որն ազգագրական նյութեր հավաքելու նպատակով շրջագայել է Հայաստանի բազմաթիվ գավառներ և իր հավաքչական ծրագրի մեջ ունենալով նաև տեղագրական բաժին, հավաքել ու հրատարակել է բազմաթիվ արձանագրություններ, դարձյալ կցված հուշարձանների նկարագրությանը: Այդ ընագրերին Լալայանը հաճախ կցել է նաև նրանց լուսանկարները, որոնք և նրա աշխատության ամենադրական մասն են կազմում: Ե. Լալայանի աշխատությունները հրատարակված են «Ազգագրական հանդեսի» հատորներում (26 հատոր), որոնց մի մասը լույս է տեսել նաև առանձին պրակներով:

Արձանագրությունների լուսանկարներ հրատարակելու գործում իր արժեքավոր տեղն ունի նաև սակավ ծանոթ լուսանկարիչ Մ. Փափազյանը, որ հրատարակել է հինգ լուսատիպ ալբոմներ Հայաստանի հուշարձանների, որոնց մեջ կան նաև նրանց վրայի արձանագրություններից օրինակներ[3]:

Նույնպես քչերին է ծանոթ մնացել Հ. Քյուրքչյանի լուսանկար ալբոմը «Հայաստան, ավերակք Անւոյ» (Երևան, 1878): Ինչպես Փափազյանի, այնպես էլ Քյուրքչյանի աշխատությունները ունեցել են փոքր տպաքանակ, սպառվել են շուտով և, մանավանդ, որպես ցուցադրական նյութ շատ են գործածվել ու շուտ փչացել. հատկապես Փափազյանինը՝ ձեռքի աշխատանք և մեծադիր լինելու պատճառով ունեցել է փոքր տպաքանակ և թանկ գին:

Սակայն կատարված այդ աշխատանքները նույնիսկ քանակի տեսակետից դեռևս շատ հեռու են սպառիչ լինելուց: Մոտավոր հաշիվներով 9—10 հազարի հասնող հայերեն արձանագրություններից, որոնք սփռված են ամբողջ հայկական բարձրավանդակում և հարևան երկրներում, երբեմն էլ հասնում են հեռավոր վայրեր՝ Վոլգայի կամ Նեղոսի ափերը, հազիվ 1500—2000-ն է եղել հրատարակված: Կ. Կոստանյանցի հայտնի *Վիմական տարեգիր* ժողովածուն, որը հրատարակված է 1913 թ. և մինչ այդ հրատարակվածների մոտավորապես լրիվ հավաքածուն է, պարունակում է ընդամենը 1328 արձանագրություն:

---

[1] Ալիշան, *Շիրակ, Յառաջաբանից հետո Ծանօթութիւնք բաժին (էջ չունի)*:

[2] *Հիմնական աշխատությունների ժամանակագրական ցանկը տե՛ս* Կ. Կոստանյանց, *Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ* XXVIII—XXXI:

[3] Մատթէոս Փափազեան, *Հնութիւնք վանորէից հայոց—Ղազախ, Գեղարքունիք, Վայոց ձոր, Գողթան գաւառ, Սյունեաց աշխարհ, 1889—1892*:

Որակի տեսակետից հրատարակված արձանագրությունները ունեն շատ մեծ թերություններ: Դեռ XIX դարի առաջին կեսում նրանք մոտ էին կանգնած ընդհանուր արձանագրագիտության սկզբունքներին և հավաքչական մեթոդներին, ապա նույն դարի երկրորդ կեսին, երբ Եվրոպայում մշակվեցին այլ, ավելի կատարյալ վերծանության և հրատարակման եղանակներ, մեզ մոտ կատարված աշխատանքները արդեն չէին բավարարում գիտական նոր պահանջներին:

Ներսես Աշտարակեցու կողմից Հարություն վարդապետ Տեր-Բարսեղյանին (հավանաբար և ուրիշներին) տրված հրահանգները, որոնք իր ժամանակի պատմա-բանասիրական հասկացողությունների արգասիքն են, շարունակվեցին ուժի մեջ մնալ մինչև դարի վերջը: Մի կողմից առաջին հրատարակիչների օրինակին ենթարկվելու մտայնությունը, մյուս կողմից այդ գործով զբաղվող հայ մտավորականների կտրված լինելը համաշխարհային գիտական մտքից՝ արգելքներ հանդիսացան նոր սկզբունքների կիրառմանն այդ ասպարեզում:

Սակայն այդ հետամնացության ամենահիմնական պատճառը հայ իրականության ընդհանուր կուլտուրական ցածր մակարդակն էր, որի պայմաններում հնարավոր չեղավ ինչպես արձանագրությունների, նույնպես ազգագրության, բանահյուսության և այլ կարգի նյութերի հավաքման համար կայուն և կենտրոնացված կազմակերպություններ ստեղծել, որը կարող էր ապահովել նման աշխատանքների գիտական մակարդակը, նրանց համար տեխնիկական սարքավորումներ հայթայթել և հատուկ մասնագետներ պատրաստել:

Արձանագրությունների հավաքման աշխատանքները, ինչպես հայտնի է, կապված են երկարատև և ծանր ճամփորդությունների ու նյութական զգալի միջոցների հետ, մանավանդ որ արձանագրությունները սփռված են ամբողջ երկրով մեկ, թե՛ բնակելի և թե՛ անբնակ վայրերում, դժվար մատչելի լեռնային վայրերի և ձորերի մեջ. այդպիսի տեղերն այցելելու համար պահանջվում են երկարատև ժամանակ և տեխնիկական զանազան միջոցներ: Արձանագրությունների զգալի մասը հողմահարված-եղծված են, շատերը ջարդված և բեկորների վերածված: Յուրաքանչյուր հուշարձանի մոտ պահանջվում է մի քանի օրվա համառ աշխատանք, բանվորներ՝ որպեսզի թափված քարերը տեղից շարժեն, հարմարություններ՝ պատերի բարձր տեղերում գրվածներին մոտենալու համար. ապա վերծանող մասնագետից բացի, շնորհալի լուսանկարիչներ և գծագրող ընդօրինակողներ, այլ խոսքով, մի քանի հոգուց բաղկացած գիտական արշավախումբ: Այսպիսի գործը կազմակերպել կարող է, հարկավ, ամուր նյութական և գիտական հիմքերի վրա դրված հատուկ կազմակերպությունը միայն, որը հայ իրականության մեջ բացակայում էր:

Չնայած բոլոր այս պայմանների բացակայությանը՝ կատարվել է մեծ և շնորհակալ աշխատանք. մոտ 2000 հայերեն արձանագրություններ հավաքվել և հրատարակվել են: Այդ գործը կատարել են առանձին նվիրված անհատներ, սեփական նախաձեռնությամբ և զրկանքների գնով, բայց ոչ պատշաճ գիտական մեթոդներով: Արձանագրություններ հավաքողների մեծ մասը եղել են մարդիկ, որոնք ո՛չ այդ գործի համար և ո՛չ էլ ընդհանրապես գիտական պատրաստություն են ունեցել. Նրանց մի զգալի մասը եղել են հոգևորականներ, որոնց կղերական աշխարհայացքը նույնպես բացասական դեր է խաղացել թե՛ նյութերի մեջ ընտրություն կատարելու և թե՛ նրանց բովանդակությունը ճիշտ ըմբռնելու տեսակետից: Նշենք նաև, որ եղել են դեպքեր, երբ հեղինակավոր հոգևորականներ, օգտվելով իրենց պաշտոնական դիրքից, արձանագրությունները հավաքելու կարևոր գործը հանձնարարել են նվազ պատրաստություն ունեցող անձանց և իրենք նույնիսկ չեն էլ ստուգել նրանց ճշտությունը: Նախորդ էջերում տեսանք, որ Սանահնի և Հաղպատի վանքերի արձանագրությունները Ջալալյանցը հրատարակել է, օգտվելով Հովհաննես Տեր-Բարսեղյանի հավաքածուից: Ջալալյանցի գրքի երկրորդ հատորում ամփոփված են գլխավորապես Վայոց ձորի արձանագրությունները, որտեղ հեղինակը երբեք չի եղել, այլ նրա խնդրանքով աշխատանքը կատարել են Հովհաննես Բաբայանը և ուրիշներ[1]:

---

[1] *Տե՛ս «Փորձ», 1878, էջ 321, որտեղ Բաջբերունին մատնանշում է նաև Անի քաղաքի, Շամախու շըրջանի և այլն արձանագրությունները Ջալալյանցի համար ուրիշների հավաքած լինելը և այդ առթիվ մամուլում տեղի ունեցած բանավեճը:*

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ բանասիրության մեջ արձանագրություններ հրատարակող կամ իրենց ուսումնասիրությունների ընթացքում օգտագործող գիտնականները արդեն նշում են հրատարակությունների անբավարար վիճակը: *Վիմական տարեգրի* կազմողը հետևյալ կերպ է բնորոշում հրատարակությունների որակը և նրանց թերությունների պատճառները.

«Չեն առ մեզ ճշգրիտ նմանահանութիւնք և ոչ կարգաւորեալ համախմբեալ ժողովածոյք յիշատակարանացդ ըստ աւրինակի, որպէս գտանեմք զայնպիսին ի լեզուս եւրոպացի ազգաց[1]:

և ապա՝

«Ի բաղդատութենէ անտի արձանագրութեանց ոմանց, որք ոչ ի միոջէ ձեռանէ են ընդաւրինակեալք, բացահայտ լինի, եթէ կարի բազմազան են տարբերութիւնք ընթերցուածոցն, անշուշտ, յառաջացեալք ի տարբերութենէ անտի վերծանողացն, յորոց ոմանք թերուսք և անվարժք, այլք իբր աւտարազգիք, անտեղեակք նորին հանգամանաց ոճոյ գրութեանն, և այլն ըստ կարգին»[2]:

Արձանագրությունները հավաքող և հրատարակողների հիմնական թերությունները հետևյալներն են.

1. Նրանք հատկապես պատրաստված մասնագետներ չեն և ոչ էլ միշտ անհրաժեշտ ընդհանուր գիտելիքների տեր. այդ պատճառով էլ ունեցել են տարբեր մոտեցում և տարբեր հաջողությամբ ու թերություններով են կատարել իրենց աշխատանքը:

2. Նրանցից յուրաքանչյուրն, ըստ իր զարգացման մակարդակի և աշխարհայացքի, սեփական չափանիշով է որոշել արձանագրությունը, համարել կարևոր կամ անկարևոր և, սովորաբար, արտագրել է միայն կարևոր համարածը:

3. Արտագրողները չեն պահպանել արձանագրությունների հնագրական, ուղղագրական և քերականական առանձնահատկությունները. իրենց հասկացողությամբ «ուղղել» ու գրաբարի են վերածել ժողովրդական-բարբառային բառերն ու արտահայտությունները, որով միանգամայն արժեքազրկել են այդ բացառիկ կարևոր սկզբնաղբյուրները հայոց լեզվի պատմության և բարբառագիտության համար:

4. Հավաքել-արտագրել են գերազանցապես ընդարձակ, հեշտ վերծանելի, ամբողջական և իրենց բովանդակությամբ նշանավոր անձերի ու դեպքերի հետ կապված արձանագրությունները:

5. Նրանց ընթերցումների մեջ կան թվականների, անձնանունների, տեղանունների և նոր ու հազվագյուտ բառերի շատ աղճատումներ, ինչպես և բովանդակության անկապություններ՝ մաշված տեղերը բաց թողնելու հետևանքով:

6. Չեն օգտագործել տեխնիկական օժանդակ հարմարություններ. չեն լուսանկարել, գծագրել կամ պատճենահանել (էստամպաժ), որով արձանագրությունների ստույգությունը մնում է կասկածելի. այդ պատճառով էլ հաճախ նույն արձանագրությունը երկու տարբեր հրատարակիչների մոտ խիստ տարբերվում է իրարից:

* * *

Հայերեն արձանագրությունների ժամանակակից գիտական մեթոդներով հավաքելու և հրատարակելու պատմությունը սերտորեն կապված է Անի քաղաքի ավերակների պեղման աշխատանքների հետ:

1892 թ. Ն. Մառը սկսեց պեղել Բագրատունյաց մայրաքաղաքի ավերակները: Ինչպես պարզվում է արխիվային նյութերից՝ Ն. Մառը ծրագրել էր պեղման իր աշխատանքները վերածել Հայաստանի նյութական և հոգևոր կուլտուրայի ուսումնասիրության մի խոշոր ձեռնարկի, որի մեջ հայերեն արձանագրությունների ուսումնասիրությունը պետք է կազմեր մի կարևոր բնագավառ: Իր եռանդուն ու համակրելի բնավորության և բազմակողմանի

[1] Կ. Կոստանեանց, *Վիմական տարեգիր*, *Նախաբան*, էջ XXI:
[2] *Անդ*:

պատրաստության շնորհիվ Ն. Մառը կարողացավ իր շուրջը հավաքել բազմաթիվ երիտասարդ գիտնականների և գրեթե 25 տարի տևող պեղումների աշխատանքներին զուգընթաց ուսումնասիրական բազմակողմանի աշխատանք կատարել Հայաստանում:

Հենց առաջին իսկ տարին, պեղումներից հետո, Ն. Մառը շրջագայում է նաև Անիի մերձակայքի հուշարձանները և գրառում հայերեն արձանագրություններով, որոնցից մի քանիսն անմիջապես հրատարակում է: Մինչև իր կյանքի վերջն էլ Մառը չդադարեց անդրադառնալու հայերեն արձանագրությունների ուսումնասիրության գործին: Նա իր աշակերտ-աշխատակիցների մեջ աշխատանքի բաժանում էր կատարում ըստ վերջիններիս գիտական հետաքրքրության և ունակությունների, դրա հետևանքով էլ հայերեն արձանագրությունների հավաքման և դրանց կորպուսի ձևով հրատարակման գործը հանձնարարվեց Հովսեփ Օրբելուն:

Հ. Օրբելին մասնակցեց Անիի պեղման աշխատանքներին 1906 թվականից, դեռևս լինելով ուսանող. հենց առաջին իսկ տարվանից նա ձեռնարկեց հայերեն արձանագրությունների իր ուսումնասիրությունները Ն. Մառի ղեկավարությամբ և, այնուհետև, իր գիտական բազմակողմանի գործունեության ընթացքում այդ աշխատանքը մնաց նրա ամենասիրելի բնագավառը, իսկ արձանագրությունների կորպուսի հրատարակությունը՝ նրա բաղձանքը:

Հայերեն արձանագրագիտության բնագավառում Անիի դպրոցի և հատկապես Հ. Օրբելու վաստակը ոչ միայն նրա հավաքած և հրատարակած արձանագրություններն են, այլև գերազանցապես այն, որ նա մշակեց և հիմք դրեց գիտական նոր մոտեցման դեպի այդ սկզբնաղբյուրները և ապա մշակեց դրանց հավաքման ու հրատարակման համար ժամանակակից գիտության բարձր պահանջների ոգով սկզբունքներ և մեթոդներ, որոնք ուղեցույցներ դարձան հետագա ուսումնասիրողների համար: Այդ սկզբունքի և մեթոդի առանձնահատկությունները հետևյալներն են.

1. Յուրաքանչյուր արձանագրություն ինքնըստինքյան մի ամբողջական պատմա-կուլտուրական փաստաթուղթ է. հետևաբար նույն ճշգրտությամբ պետք է հրատարակվի, ինչպես որևէ այլ ձեռագիր բնագիր:

2. Յուրաքանչյուր արձանագրություն, անկախ նրա մեծ կամ փոքր, ամբողջական կամ թերի լինելուց, պետք է հավաքել ու հրատարակել. թերի, նույնիսկ մեկ բառ և կամ մի քանի տառ կազմող բեկորները նույն արժեքն ունեն, ինչ ձեռագրական պատառիկները:

3. Հավաքելու և հրատարակելու ընթացքում խտրություն չպետք է դնել արձանագրությունների մեջ՝ ըստ նրանց բովանդակության, որովհետև մեկի համար այն ոչ կարևոր է թվում, մեկ ուրիշ մասնագետի համար կարող է արժեքավոր լինել:

4. Ի տարբերություն հին ձեռագրերի, որոնք սովորաբար մի քանի օրինակով են մեզ հասել և պահպանվում են վստահելի վայրերում (մատենադարան, գրադարան, թանգարան և այլն) ու գիտական հրատարակության ժամանակ հնարավոր է կատարել համեմատություններ ու նշել տարբերությունները՝ յուրաքանչյուր արձանագրություն միայն մեկ օրինակով է գրված, այն էլ բացօթյա և ենթակա բնական ու չարամիտ ոչնչացման, այդ պատճառով էլ պիտի ճշտորեն պահպանել նրա գրչական, ուղղագրական և բոլոր այլ կարգի առանձնահատկությունները հրատարակության ընթացքում, վերծանողի հավելումներն ու շտկումները առնելով պայմանական նշանների մեջ: Վերծանումներին որպես փաստագիր պետք է կցել արձանագրության լուսանկարը:

5. Ջարդված, եղծված կամ մասամբ կորած մասերը պետք է տրվեն առկա վիճակով, ամեն տեսակի լրացումները և կռահումները՝ պայմանական նշանների մեջ:

6. Յուրաքանչյուր արձանագրության համար նշել նրա գտնված վայրի ստույգ նկարագրությունը՝ գյուղ, քաղաք, հուշարձանի անունը և տեսակը. ապա հուշարձանի ո՞ր մասում է գտնվում. արտաքին, ներքին, ո՞ր պատի վրա, նրա ո՞ր մասում և ո՞ր արձանագրության մոտ:

7. Յուրաքանչյուր արձանագրության համար նշել լրիվ մատենագիտություն (հեղինակ, աշխատություն, էջ):

8. Տեղում հավաքչական աշխատանքները վարել այնպես, որ բավարարեն այս պահանջներին՝ հրատարակության ժամանակ:

Հայաստանի գիտնականներից այդ նոր ուղղությամբ հատկապես մեծ աշխատանքներ է կատարել Գարեգին կաթ. Հովսեփյանը, որը շրջագայել է Հայաստանի շատ վայրեր ու անձամբ վերծանել, ստուգել և լուսանկարել է արձանագրությունները: Մասնակի հրատարակություններից բացի՝ հատկապես նշելի են նրա երկու հիմնական աշխատությունները *Քարտեզ հայ հնագրության*[1] և *Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ* եռահատոր աշխատությունը[2]: Դրանց մեջ ամփոփված են հարյուրավոր նորահայտ կամ ի նորո ստուգված, լուսանկարված և քննասիրական մանրակրկիտ քննության ենթարկված արձանագրություններ:

Այս նոր մեթոդով հայերեն արձանագրություններ հավաքելու բնագավառում զգալի աշխատանք են կատարել նաև Մառի աշակերտներ Սմբատ Տ. Ավետիսյանը և Աշխարհբեկ Քալանթարը, բայց դժբախտաբար այդ աշխատությունների մեծ մասը չի հրատարակվել, նրանց մահվանից հետո կորել է: Այս ուղղությամբ նշանակալից է նաև բազմավաստակ Լեոն Մելիքսեթ-Բեկի աշխատանքները, որը բացի արձանագրությունների մասնակի հրատարակություններից, կազմել է նաև մի մեծ ժողովածու՝ «Վիրահայոց վիմական տարեգիր» (անտիպ):

Սովետական շրջանում այդ ուղղությամբ առանձնապես արդյունավետ աշխատանքներ է կատարել Կարո Ղաֆադարյանը, որը բացի արձանագրությունների մասնակի հրատարակություններից, ձեռնարկել է նաև կուլտուրական նշանավոր կենտրոն հանդիսացած մեծ վանքերի պատմությանը, ճարտարապետական կառուցվածքներին և արձանագրություններին նվիրված առանձին հատորների հրատարակությանը, որոնց մեջ տրված են բոլոր արձանագրությունների գծագրերն ու զգալի չափով լուսանկարները[3]:

* * *

Հայերեն արձանագրությունները, ինչպես ասվեց, հրատարակված են գերազանցապես տեղագրական բնույթի բազմաթիվ աշխատությունների մեջ՝ առանձին գրքերով և մամուլի մեջ՝ հոդվածի և հոդվածաշարքի ձևով: Ուսումնասիրողի համար դրանցից օգտվելը կապված է մեծ դժվարությունների հետ. նախ՝ այդ աշխատությունները վաղուց հրատարակված լինելով՝ դժվար են ճարվում և ապա՝ շատ հեղինակներ նույն վայրի նույն արձանագրությունը հրատարակել են զգալիորեն տարբեր վերծանումներով: Ուսումնասիրողը ձեռքի տակ չունենալով բոլոր հրատարակությունները, հաճախ օգտագործում է վատ վերծանված բնագիրը և սխալմունքի մեջ ընկնում:

Դեռևս անցյալ դարի երկրորդ կեսում պահանջ է զգացվում եվրոպացիների կողմից հրատարակված զուտ արձանագրական ժողովածուների օրինակով հրատարակել հայերեն արձանագրությունների դիվան—Corpus.

1879 թ. Ռուսաստանի հնագիտական համագումարի նախապատրաստական կոմիտեի նիստերից մեկում առաջարկ մացվեց համագումարի օրակարգի հարց դարձնել Կովկասի սահմաններում գտնվող, մինչև XII դարն ընդգրկող, հայերեն, վրացերեն, հունարեն, եբրայերեն ու սեպագիր արձանագրությունները ժողովածուների ձևով հավաքելու և հրատարակելու խնդիրը և, որպես գործնական քայլ, հրատարակել մի ժողովածու մինչև համագումարի բացումը[4]: Ն. Էմինը հայտնում է, որ այդ ժամանակաշրջանն ընդգրկող հայերեն շատ արձանագրություններ կան հրատարակված. այդ հաղորդման հիման վրա կոմիտեն հանձնարարում է Ն. Էմինին կազմել հայերեն արձանագրությունների ժողովածու, որը և լույս տեսավ Մոսկվայում 1881 թ., առանձին գրքով[5]:

Ն. Էմինի կազմած այդ ժողովածուն շատ հեռու է հայերեն արձանագրությունների դիվան—Corpus կոչվելուց: Նրա մեջ, ինչպես և վերնագիրն է նշում, ընդգրկված են շատ

---

[1] *«Շողակաթ», Վաղարշապատ, 1913, նաև առանձին գրքով:*

[2] *Մասն Ա, Վաղարշապատ, 1928, մասն Բ, Երուսաղեմ, 1942, մասն Գ, Նյու-Յորք, 1942,3:*

[3] Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948:*

[4] Пятый археологический съезд в Тифлисе—Протоколы подготовительной комиссии, III *նիստ, 13 մարտի 1879 թ., էջ 39:*

[5] Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего.

փոքր աշխարհագրական միջավայր և ընտրովի ու փոքր քանակությամբ արձանագրություններ, այն էլ քաղվածաբար՝ նախորդ տեղագրական աշխատություններից, առանց տեղում անձամբ ստուգելու, առանց լուսանկարների կամ պատճեն ներկայացնող գծագրերի՝ նախորդ հրատարակիչների սխալներով: Այս բոլորի հետևանքով էլ նա համարյա աննկատ մնաց բանասերների կողմից:

Ժամանակագրական կարգով հայերեն արձանագրությունների ժողովածու կազմելու փորձը կատարել է բանասեր Կարապետ Բասմաջյանը:

Փարիզում հրատարակվող իր «Բանասէր» հանդեսի մեջ տպագրվող «Մեր հնությունները» հոդվածաշարքի մեջ, 1900 թ. նա գրում է, որ Խրիմյան Հայրիկի կողմից հրավիրվել է Կովկաս «Հնախոսական ուսումնասիրություններ կատարելու համար», որոնց մի կարևոր բաժինը պետք է կազմի «Արձանագրության ստույգ և անթերի հրատարակությունը, որով հետո պետք է կազմվի իմ Հայարձան անուն ուսումնասիրությունը»[1]:

Կ. Բասմաջյանը, հենվելով տեղերում կատարած իր համեմատությունների վրա՝ նաև շատ իրավացի դիտողություններ է անում նախորդ հրատարակությունների թե՛ որակի և թե՛ քանակի վերաբերյալ: Սակայն Բասմաջյանին չհաջողվեց հրատարակել Հայարձանը, իսկ նրա մասնակի հրատարակություններից ամենահինը՝ «Հայերեն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի և Մարմաշինու», որը լույս տեսավ միայն 1931 թ. ֆրանսիական գիտական հանդեսում և ֆրանսերեն թարգմանությամբ, տառապում է գրեթե նույն թերություններով, ինչ որ իր քննադատած հեղինակների հրատարակածները. միակ առավելությունը, որ ունի Կ. Բասմաջյանի աշխատությունը, դա սակավաթիվ արձանագրությունների լուսանկարների տպագրությունն է:

1910 թ. Լազարյան ճեմարանի (Մոսկվա) մասնագիտական դասարանների խորհուրդը երկու մրցանակաբաշխություն հայտարարեց (Գ. Քանանյանի մրցանակ) հայագիտական աշխատությունների լավագույն գործերի համար 100 և 700 ռուբլի գումարով. դրանցից առաջինը՝

«Ժողովածու (բացատրական առաջաբանով) ցայժմ ծանոթ բոլոր հին-հայկական արձանագրությունների՝ մինչև ԺԵ դարը (Corpus inscriptionum Armenicorum), որոնք գտնվում են Ռուսաց Հայաստանի սահմաններում և հանված են լուսանկարով կամ խնամքով բնօրինակված իսկականից: Նույն նյութի մասնակի կատարումը՝ այն է Ռուսաց Հայաստանի որևէ նշանավոր կամ մի քանի գավառի արձանագրությունների լիակատար ժողովածուն կարող է պարգևատրվել նշանակված մրցանակի մի մասովը»[2]:

Թեև աշխատությունները ներկայացնելու համար ժամկետ էր սահմանված երեք տարի, բայց և այնպես նշված աշխատությունը չներկայացվեց:

1912 թ. մեր հանգուցյալ ուսուցիչ Հ. Աճառյանը «Հանդէս ամսօրեայ» ամսագրի մեջ հրատարակեց մի դիմում-հայտարարություն, որի մեջ հայտնում էր, թե ինքը ձեռնարկել է կազմելու հայերեն արձանագրությունների ժողովածու—*Հայարձան*. արդեն հավաքել է 1000-ի չափ արձանագրություններ, որոնց թիվը շուտով կհասցնի 1500-ի, դրանք հիմնականում վերաբերում են Ռուսահայաստանի շրջաններին, պակասում են միայն Թուրքահայաստանի և գաղթավայրերի արձանագրությունները, այդ պատճառով էլ կոչ է անում բոլոր շահագրգռված մարդկանց խնամքով արտագրել և իրեն ուղարկել իրենց մատչելի վայրերից արձանագրություններ. հայտարարությունը վերջանում է 5 կետից բաղկացած հրահանգով՝ թե ինչ մեթոդներով պիտի հավաքվեն, ապա կոչ է անում բոլոր թուրքահայ թերթերին՝ արտատպելու այդ հայտարարությունը[3]:

Այժմ էլ, հանգուցյալ պրոֆեսորի անտիպ աշխատությունների շարքում մնում է նաև *Հայարձանը*. այն կազմված է քաղվածաբար՝ տեղագրական գրքերից և մամուլի հոդվածներից՝ հիմնականում, և նրա մեջ առնված են մինչև հայոց (1551) թվականը կրող արձանա-

---

[1] *«Բանասէր», Դ պրակ, Փարիզ, 1900, էջ 273—276:*
[2] *«Ազգագրական հանդէս», XX, 1910, էջ 216:*
[3] *«Հանդէս ամսօրեայ», 1912, ապրիլ, էջ 255:*

գրությունները միայն: Մասնավոր խոսակցության մեջ Հ. Անառյանը հայտնեց մեզ, որ ինքը 1912 թվականից հետո այլևս չի շարունակել այդ գործը, որովհետև նույն թվականին լույս է տեսել ազգագրագետ Ե. Լալայանի նման բովանդակության հայտարարությունը և ինքը կարծել է, որ Լալայանի կազմածը՝ ունենալով լուսանկարներ՝ կցված արձանագրություննեիրն, ավելի կատարյալ գործ կլինի:

Ե. Լալայանի այդ հայտարարությունը լույս է տեսել «Ազգագրական հանդեսի» 1912 թ. XXIII գրքի վերջում. այդտեղ ասվում է, որ 10 տարուց ի վեր ինքն զբաղված է Հայկական արձանագրությունների ժողովածու կազմելու աշխատանքով, որը զարդարված կլինի արձանագրությունների բազմաթիվ լուսանկարներով: Ուստի խնդրում է բոլորին ուղարկել իրեն արձանագրությունների լուսանկարներ՝ վարձատրությամբ կամ փոխանակային կարգով:

Ե. Լալայանի այդ աշխատությունը նույնպես մնաց անկատար. նա «Ազգագրական հանդեսի» մեջ զետեղված տեղագրական բաժնում արձանագրություններին երբեմն կցել է նաև լուսանկարներ, բայց դրանք այնքան էլ շատ չեն. ընդհանրապես Ե. Լալայանի հրատարակած արձանագրությունների մեծ մասը նույնպես քաղված են նախորդ հրատարակություններից, իսկ իր վերծանումները չեն կարող մրցել նախորդների հետ:

Հայերեն արձանագրությունների դիվան-Corpus կազմելու գործում մեծ աշխատանքներ է կատարել Ն. Մառը: Արդեն նշել ենք այդ ուղղությամբ նրա վաստակի մասին՝ կապված Անիի պեղումների սկզբնավորման հետ, բայց Ն. Մառը իր բանասիրական ընդարձակ աշխատանքների մեջ ամենակարևոր նշանակությունը տալիս էր անցյալի մշակույթի արտահայտություն հանդիսացող արձանագրություններին և, թերևս, ամենից ավելի զգում այն դժվարությունները, որոնք կապված էին այդ առաջնակարգ նյութի օգտագործման հետ, քանի որ նրանք ցրված էին բազմաթիվ գրքերի ու պարբերական մամուլի էջերում:

Կովկասյան արձանագրությունների՝ հայկական և վրացական Corpus-ներ կազմելու ուղղությամբ Ն. Մառը գործնական քայլերի է դիմել 1903 թվականին: Ն. Մառի զեկուցագրի հիման վրա Կայսերական հնագիտական հանձնաժողովը որոշում է ընդունել այդ Corpus-ների հրատարակման գործն իր վրա վերցնել և հանձնարարել է Ն. Մառին Կովկասում հրավիրել խորհրդակցություն և մշակել սկզբունքներ ու աշխատանքային ծրագիր: Խորհրդակցությունը տեղի ունեցավ Թիֆլիսում, նույն 1903 թ. հունիսի 10-ին, թղթի վրա ամեն ինչ արվեց, բայց գործնական որևէ արդյունք այնպես էլ երևան չեկավ[1]: Հետագայում, Ն. Մառը ճիշտ կերպով բնորոշել է այդ անհաջողության պատճառները. ժամանակն աննպաստ էր ազգամիջյան կոլեկտիվ աշխատակցության համար և չկային էլ այդ ոգով աշխատելու ընդունակ գիտական կադրեր[2]:

Հետագայում, 10 տարի անց, տեղեկանալով, որ Կ. Կոստանյանցը կազմած ունի հայերեն արձանագրությունների մի ժողովածու՝ Ն. Մառը ստանում է այն և հրատարակում:

Ինչպես ինքը՝ կազմողը, նույնպես և աշխատության խմբագիր Ն. Մառը իրենց առաջաբաններում նշում են, որ այդ ժողովածուն իր ձևով, կազմելու սկզբունքներով և բովանդակությամբ հեռու է ժամանակի գիտական պահանջները բավարարող «Կորպուս» հասկացողությունից, բայց ավելի կատարյալը չլինելու պայմաններում, այն կարող է օգնել հետազոտողներին:

Կ. Կոստանյանցի կազմած ժողովածուի մեջ հավաքված են բազմաթիվ առանձին գրքերի և հոդվածների մեջ ցրված հայերեն արձանագրությունները և դասավորված են ժամանակագրական կարգով: Կազմողը դրանք տեղերում անձամբ չի համեմատել և ստուգել. հետևաբար նախկին հրատարակիչների բոլոր սխալ վերծանումները նույնությամբ կրկնվել են նաև այս ժողովածուի մեջ. դեռ ավելին՝ Կոստանյանցը հարմար է համարել արձանա-

---

[1] Տե՛ս Ն. Մառի առաջաբանը Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգիր» ժողովածուի, էջ 10։

[2] «Վիմական տարեգիր», էջ 11։ Այդ ձեռնարկության առթիվ եղան գրական արձագանքներ հայ մամուլում. տե՛ս «Արարատ», 1903, Ե, մայիս, էջ 463—465. Մեսրոպ Վարդապետի՝ հայերեն և վրացերեն արձանագրությունների ժողովածու-հոդվածը։

գրությունների սկզբից և վերջից կրճատել բովանդակության հետ իբրև կապ չունեցող՝ դիմումի և անեծքի բանաձևերը, որ իհարկե ճիշտ չէ: Ժողովածուն չունի ստույգ փաստաթուղթ (լուսանկար, էստամպաժ, գծագիր). արձանագրությունների տեղադրման առթիվ բավարարվել է յուրաքանչյուրի տակ միայն բնակավայրի հիշատակումով՝ առանց նշելու արձանագրությունը պարունակող բուն հուշարձանի անունը, նրա ճիշտ վայրը և այլ մանրամասնություններ, որոնք շատ կարևոր են արձանագրության բովանդակության ճիշտ ըմբռնման համար: Յուրաքանչյուր արձանագրության տակ նշված է մատենագիտությունը, բայց այն լրիվ չէ: Ժողովածուից դուրս են մնացել մինչև 1913 թ. լույս տեսած բավական մեծ թվով արձանագրություններ և, վերջապես, թվական չունեցող արձանագրությունները զետեղված են գրքի վերջում, հավելվածի ձևով, որով միանգամայն կորցնում են իրենց արժեքը[1]:

Թված այս բոլոր բացասական հանգամանքների շնորհիվ Կոստանյանցի «Վիմական տարեգիր» ժողովածուն մեծ չափերով զրկվել է պատմաբանասիրական, կուլտուր-մշակութային և լեզվաբանության պատմության համար արժեքավոր սկզբնաղբյուրների նշանակությունից, որ ունեն արձանագրությունները:

* * *

Սովետական իշխանության հաստատումով Հայաստանում հիմնականորեն վերացան բոլոր այն խոչընդոտները, որոնք արգելակում էին հայ բազմադարյան մշակույթի ուսումնասիրմանը և հասարակական սեփականություն դարձնելու աշխատանքներին: Հայ ժողովրդի մտավոր կյանքի փարոս հանդիսացող գիտությունների ակադեմիայի ստեղծումով նոր փայլ ստացավ նաև հայագիտությունը. հայոց լեզուն, գրականությունը, պատմությունը, հնագիտությունը, ազգագրությունը, արվեստը, ճարտարապետությունը և բոլոր մյուս բնագավառները այժմ ուսումնասիրվում են հատուկ ինստիտուտներում կենտրոնացած հարյուրավոր մասնագետների ջանքերով: Այդ աշխատանքների հաջողության համար առանձին կարևորություն ունի սկզբնաղբյուրների հայտնաբերումը, ուսումնասիրությունը և հրատարակությունը, ինչպես նյութական կուլտուրայի մնացորդների, այնպես էլ գրավոր աղբյուրների:

Վերջին տասնամյակներում հնագետների ջանքերով երկրի ընդերքից պեղվել և ուսումնասիրվել են հսկայական քանակությամբ նոր նյութեր, որոնք վերաբերում են Հայաստանի պատմության ու մշակույթի բոլոր շրջաններին, իսկ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը գիտության սեղանին է դրել մատենագրական ու փաստաթղթերի մեծածավալ հատորներ:

Հայագիտության այս ընդհանուր և բազմակողմանի աշխատանքների մեջ իր արժանի տեղն ունի նաև հայերեն արձանագրությունների հավաքման, ուսումնասիրման և Corpus-դիվանի ձևով հրատարակման գործը: Դեռևս 1938 թ., երբ Հայաստանում գոյություն ուներ միութենական ակադեմիայի հայկական ֆիլիալ միայն, Հ. Օրբելու բացատրական զեկուցագրի հիման վրա Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը օգոստոսի 20-ի իր նիստում հատուկ որոշում կայացրեց և դրամական միջոցներ առանձնացրեց հայերեն արձանագրությունների դիվան հրատարակելու համար, սակայն համաշխարհային պատերազմը ժամանակավորապես արգելակեց դրա իրականացումը:

1954 թ. գիտությունների ակադեմիան կազմեց արձանագրագիտական մշտական գիտարշավ[2], որը զինված տեխնիկական բոլոր միջոցներով մեկնում է շրջանները և հատուկ ծրագրով ու

---

[1] *Եթե հուշարձանի վրա դրանց տեղագրությունը նշված լիներ, ապա մի մասի ժամանակը կարելի կլիներ որոշել՝ նրանից վեր կամ վար եղած արձանագրությունների թվականների հիման վրա: Որոշ մասի ժամանակն էլ հնարավոր է որոշել նրանց մեջ հիշատակված անձնանունների և դեպքերի ժամանակագրության օժանդակությամբ: Այդ արձանագրությունների որոշ մասի ժամանակագրությունը կարելի կլիներ որոշել նաև հնագրական առանձնահատկությունների հիման վրա, եթե ժողովածուում տված լինեին նրանց լուսանկարները կամ պատճեն արտահայտող գծագրեր:*

[2] *Սկզբում պատմության ինստիտուտին, հետագայում հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից:*

մշակված մեթոդներով հավաքում արձանագրությունները, անկախ այն բանից, նրանք նախկինում հրատարակված են թե ոչ: Իսկ այժմ արդեն հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից ստեղծված է արձանագրագիտական հատուկ սեկտոր, որի տրամադրության տակ կան 4 հազարի հասնող հայերեն արձանագրություններ՝ տեղում վերծանված, լուսանկարված և գծագրված: Բայց դա եղած հավաքչական աշխատանքի փոքր մասն է. դեռ որքա՞ն վայրեր կան, որոնք սպասում են գիտարշավի այցելությանը, Սովետական Հայաստանի շրջանների կեսից ավելին, հապա Արևմտյան Հայաստանը և գաղթավայրերը:

Հավաքչական աշխատանքին զուգընթաց հիմք է դրվել նաև հայերեն արձանագրությունների լրիվ ժողովածուի՝ դիվանի հրատարակությանը, արդեն լույս է տեսել մեկ հատորը (պրակ II), որի մեջ ամփոփված են պատմական Սյունիքի այժմյան երեք շրջանների՝ Գորիսի, Սիսիանի և Ղափանի արձանագրությունները. նույն աշխարհագրական սկզբունքով և մշակված մեթոդներով պատրաստվում են այլ շրջանների արձանագրությունները ընդգրկող պրակները: Իսկ Անիի արձանագրությունների այս պրակը կազմում է դիվանի I պրակը, որը տեխնիկական պատճառներով լույս է տեսնում II պրակից հետո:

Հանգուցյալ ակադեմիկոս Հ. Օրբելին Անիի արձանագրությունների ժողովածուն կազմել է Անիի պեղումներին իր մասնակցության մեկ տասնամյակից ավելի տարիների ընթացքում. տրամադրության տակ ունենալով և՛ երկար ժամանակ, և՛ տեխնիկական հարմարություններ, նա բազմաթիվ անգամներ նորից ստուգել ու նշել է կասկածելի տեղերը. եթե դրան ավելացնենք նաև նրա անսահման բծախնդրությունն ու մեծ փորձը, ապա պարզ կլինի, թե որքան կատարյալ են արձանագրությունների վերծանումները:

Անիի արձանագրությունների զգալի մասը հրատարակված է շատ անգամներ ու տարբեր մարդկանց կողմից, բայց դրանք կատարվել են արագորեն շարժվող ճամփորդների ձեռքով, առանց տեխնիկական հարմարությունների և, մանավանդ, առանց լուսանկարահանման, այդ պատճառով էլ շատ մեծ թերություններով և սխալներով: Հ. Օրբելու հավաքածուն և՛ ստույգ է, և՛ լրիվ: Ինչպես ընդհանուր թիվը, այնպես էլ յուրաքանչյուր արձանագրության տակ նշված մատենագիտության օգնությամբ մի քանի արձանագրության համեմատությունը անմիջապես կհամոզի մասնագետ ընթերցողին մեր ասածների ճշմարտացիությանը:

Ինչպես Անիի արձանագրությունների, այնպես էլ մի շարք այլ վայրերի՝ Մրեն, Դանձասար և այլն ժողովածուներ դեռևս շատ վաղուց Հ. Օրբելու կողմից պատրաստված են եղել տպագրության համար, նույնիսկ տպարանում շարված և դրանց փորձնական օրինակները գտնվում են հանգուցյալ ակադեմիկոսի արխիվում. դրանք տպագրվելու էին Լենինգրադում, գիտությունների ակադեմիայի տպարանում: 1924 թվականին Նևա գետը դուրս գալով ափերից հեղեղեց քաղաքի առափնյա մասերը և դրանց շարքում ակադեմիայի տպարանը, որի հետևանքով կորան և՛ շարվածքները, և՛ այն հատուկ հայերեն արձանագրական տառերը, որոնք մեծ ուսումնասիրության ու ջանքերի գնով ստեղծել էր անխոնջ գիտնականը և իր իսկ ձեռքով շարել: Այդ տառաձևերի վերականգնման հետ կապված դժվարությունները և զբաղվածությունը խանգարեցին Հ. Օրբելուն հրատարակելու այդ պատրաստի աշխատությունները:

1954 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիան որոշում ընդունեց հայերեն արձանագրությունների հավաքման և դիվանի հրատարակման համար, որի ընդհանուր ղեկավարն ու խորհրդատուն դարձյալ Հ. Օրբելին էր: Նկատի ունենալով, որ նա ապրում և աշխատում էր Լենինգրադում, իսկ Դիվանը պետք է հրատարակվեր Երևանում, խնդրվեց Անիի արձանագրությունների ժողովածուն, որը լինելու էր Դիվանի առաջին պրակը, հանձնել մեզ՝ տպագրության պատրաստելու համար: Հ. Օրբելին սիրով ընդառաջեց այդ խնդրանքին:

Մեր ստացածը փորձնական այն օրինակներից մեկն էր, որ փրկվել էր ջրհեղեղից, ինչպես և նույն բարեբախտությամբ փրկված լուսանկարների 25 տախտակների լրիվ տպաքանակը:

Մեր ստացած այդ փորձնական օրինակի արձանագրությունների միայն կեսի չափն է եղել սրբագրված հեղինակի ձեռքով, բոլոր վերնագրերն ու բացատրական մասերը տպված են ռուսերեն, արձանագրությունների տակ չի եղել մատենագիտություն, ինչպես և որևէ

ցանկ: Ակադ. Հ. Օրբելու «Հայերեն արձանագրությունների նշանակությունը» վերլուծում-դատողությունը, որը կազմում է սույն պրակի Ներածությունը, եղել է նույնպես ռուսերեն. Ներկա պրակի համար այն թարգմանել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտ. աշխատակից Ս. Ալաջյանը:

Դիվանը պատրաստվել է ընդունված սկզբունքներով. իսկ նշված բոլոր լրացումները ու թարգմանությունները կատարվել են մեր կողմից՝ Հ. Օրբելու ցուցումներով և համաձայնությամբ: Ժողովածուում խմբավորել ենք տարբեր տեղերում ցրված միևնույն հուշարձանի արձանագրությունները և զանազան աղբյուրներից առնելով՝ մի քանի արձանագրություններ ավելացրել: Այս բոլորը պատրաստի վիճակում տեսել և իր հավանությունն է տվել Հ. Օրբելին:

Ինչպես նշվեց, Հ. Օրբելին հայերեն վիմագիր արձանագրությունները հրատարակելու համար ստեղծել էր հատուկ տառանիշեր, որոնցով և շարված են նրա բոլոր հրատարակած գործերը, նույնպես և կիսապատրաստ վիճակում եղածները, որոնց թվում՝ Անիի արձանագրությունների պրակը:

Երբ ակադեմիան նախաձեռնեց հրատարակելու Դիվանը, սկսվեցին նրա տեխնիկական ձևավորման հարցերի քննարկումը: Այդ առթիվ որպես հիմնական ելակետ ընդունվեց Մառի և Հ. Օրբելու այն սկզբունքը, ըստ որի հրատարակության մեջ պետք է արտահայտվեն յուրաքանչյուր արձանագրության բուն գրչի գործածած գրչագրական բոլոր առանձնահատկությունները՝ այսինքն տառաձևերի ընդհանուր բնույթն ու ձևերը, որոնք բացահայտում են տարբեր դարաշրջանների գրչության ոճերը, ապա աշխարհագրական ու մշակութային տարբեր կենտրոններում առաջացած առանձնահատկությունները, և վերջապես գրիչների վարպետության աստիճանի և գեղագրության ու նախասիրության հետ կապված առանձնահատկությունները: Այս հարցում մեծ նշանակություն ունեն հատկապես տառերի միացումները կամ կցումները (лигатур), որոնց թիվը մի քանի հարյուրի է հասնում և որոնք վերծանության, հատկապես հատուկ անունների ժամանակ խիստ կարևոր են:

Այս ելակետից մոտենալով հարցին՝ պարզվեց, որ ստեղծված տառաձևերը չեն կարող լիովին բավարարել առաջադրվող պահանջները: Դրանք հիմնականում մեկ տեսակի տառեր են և բավարարում են միայն պահանջներից մեկին՝ կցումների արտահայտությանը, բայց այս դեպքում էլ նրանք լրացման կարիք ունեն, որովհետև նրանց ստեղծումից հետո հայտնաբերվել են հարյուրի հասնող կցման նոր ձևեր, և վերջապես այդ տառաձևերի ամբողջ ձուլվածքը, ինչպես նշվեց վերևում՝ ոչնչացվել է Նևայի ջրհեղեղի հետևանքով:

Ինչպես ընդհանուր, այնպես էլ հայ վիմագրական հուշարձանների հրատարակման ընթացքում վաղուց ի վեր կիրառվել է նաև մի այլ միջոց. դա արձանագրությունների առանձնահատկությունները գծագրական եղանակով արտահայտելու ձևն է: Մեր հին հրատարակիչները այդ ձևին դիմել են մի քանի դեպքերում. երբ արձանագրությունը դժվար է վերծանվում և կարող է այլ կերպ ևս վերծանվել՝ կցումների և փակագրերի խճողման հետևանքով, կամ երբ ցանկացել են խիստ գեղագիր տառերով գրվածները ներկայացնել որպես գեղագրական կարևոր նմուշ և այլն: Հնում այդպիսի գծագրեր պատրաստելը թանկ էր, իսկ ներկայումս, հաշվումները պարզեցին, որ նման ցինկոգրաֆիական աշխատանքները ավելի էժան են, քան արձանագրությունների բնագրերի սովորական կամ հատուկ տառերով շարվածք կատարելը: Նկատի ունենալով այս հանգամանքը, նպատակահարմար է համարվել հատուկ տառաձևերի փոխարեն գծագիր-պատճենի մեթոդին դիմել, որը հնարավորություն է ընձեռում արձանագրությունների թե՛ ընդհանուր և թե՛ առանձին գրերի ու կցումների բոլոր առանձնահատկությունները ճշտորեն արտահայտել և պահպանելով նրանց «անհատականությունը»՝ տեղադրել արձանագրության մեջ: Այս առթիվ ևս Հ. Օրբելին տվել է իր համաձայնությունը:

Արձանագրությունների հրատարակման հարցում նման «բծախնդրության» պատճառները շատ պարզ են: Արձանագրությունները գտնվում են քարե մեծամեծ հուշարձանների վրա կամ շենքերի պատերին, բաց դաշտերում՝ ենթակա բնական ու չարամիտ պատահարների: Նրանք դարերի ընթացքում քայքայվում, ոչնչանում են. տեղահան անել և թան-

վարանները բերել հնարավոր չէ, ոչ էլ թույլատրելի. շատ շատերը հիմնովին կամ մասամբ արդեն ոչնչացել են, մնացածներին էլ վաղ թե ուշ նույն բախտն է վիճակված. այդ պատճառով էլ նրանց ստույգ պատճենները գծագրերի և լուսանկարների ձևով պետք է մի անգամ ընդմիշտ հանձնել, որպեսզի այդ միջոցով փրկվեն վերջնական կորստից:

Հ. Օրբելին արձանագրությունների վայրի բացատրական մասում Անիի եկեղեցիները կոչել է դրանց շինության կամ ընդհանրապես հովանավորող մարդկանց անուններով: Այլ հրատարակությունների մեջ եկեղեցիները կոչված են իրենց անուններով, այսինքն այն սրբերի, որոնց անվանը նվիրված են դրանք: Ընթերցողին ավելորդ պրպտումներից ազատելու համար Հ. Օրբելու բնագիրը պահպանելով նույնությամբ, «Բովանդակության» մեջ դրանցից յուրաքանչյուրի դիմաց նշանակել ենք նաև եկեղեցիների բուն անունները:

Յուրաքանչյուր արձանագրության տակ հռոմեական թվանշաններով նշված են դրանց լուսանկարների տեղադրված աղյուսակների համարները:

Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շահխաթունեանց — *Յով. եպս. Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. երկրորդ, 1842 թ., Էջմիածին։*

Ջալալեանց — *Սարգիս վարդ. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, 1858, Տփղիս։*

Բրոսսէ — Brosset, M. F. Les ruines a Ani, I, II. 1860—61. St. Pétersb.

Բրոսսէ V.—Brosset. M. F. Voyage archeologigue en Transcaucasie, 1850, St. Petersb.

Սարգիսեան — *Ներսէս. Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս 1864, Վենետիկ։*

Ալիշան — *Ղևոնդ, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց. 1881, Վենետիկ։*

Գևորգեանց — *Մելքիսեդեկ քահ., Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակա և մայրաքաղաքին Անւոյ, 1903, Ալեքսանդրապոլ։*

Գարեգին — *վարդապետ, Քարտեզ հայ հնագրութեան, Վաղարշապատ, 1913։*

Բասմաջեան — *Կ. Յ. Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի և Մարմաշէնու, 1931, Փարիզ։*

Մառ *Н., Марр Н. Я.* Новые материалы по Армянской эпиграфике — записки Восточ. отд. Имп. русс. Арх. Общества, том VIII, вып. I—II, 1893, С. Петербург.

Մառ, *А* - Марр — Ани, М. — Л., 1934 г.

